

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Սարդարապատի Ոգիով

98 տարիներ առաջ, Մայիսեան այս օրերուն, Հայ ժողովուրդը կը մղեր իր նորագոյն պատմութեան ամենէն վնասեալ և անկիրմադարձային նակատամարտներէն մին, որու յաղթական աւարտը դարձաւ մեր ազգի գոյատեւման ու ներկայ մեր հայրենիքի գոյութեան երաշխիք:

Սրարատեան դաշտի մօտ հայկական կամաւորական խումբերը մահ ու կենաց մարտեր մղելով, բազմապատիկ քիւ կազմող բրիգադային կազմակերպումներէն մէկը, որ Մայիսեան կարողացան կասեցնել թշնամի յառաջխաղացքը դէպի 40 ֆիւմբէր հեռուորութեան վրայ գտնուող Երևան ֆաղաբը, այլ նաեւ մահացու հարուածներ հասցնելով Պոլիսէն դեկավարուող զօրքերուն՝ ստիպեցին անոնց դիմելու փախուստի: Այսպիսով, հայ ժողովուրդի եղեռնէն մնացորդացը փրկուեցաւ հաւանական կոտորածներէ ու կանխուեցաւ Հայաստան երկրի ֆարտէսէն վերջնական ջնջումը:

Սարդարապատի նակատամարտի յաղթանակը ելք ապահովուեցաւ մեր ժողովուրդի միասնականութեան շնորհիւ: Անսալով եկեղեցիներու դողանքներուն հայութիւնը իր մեծով ու պգտիկով, իր բանուորներով, մտաւորականութեամբ ու կղերական դասով, իր բնական կանգնեցաւ ոտիսին դէմ ու անոնիկ պահեց իր հայրենի հողի վերջին մասնիկը, որուն վրայ կանգնեցաւ Հայաստանի առաջին հանրապետութիւնը:

Սարդարապատի յաղթական նակատամարտի ընթացքին հայրենական անկոտորում ոգին օրինակ հանդիսացաւ մեր յաջորդող սերունդներուն եւ ազգին հաւաքար: Սարդարապատէն տասնամեակներ ետք, Արցախեան պատերազմը հանդիսացաւ նոյն ոգիի դրսեւորումը ու մենք շնորհիւ մեր ազատամարտիկներու գոհաբերութեան եւ ժողովուրդի միասնականութեան, ոչ միայն պահպանեցինք մեր հողը, այլ նաեւ վերատիրացանք դարերէ ի վեր կորսուած մեր հողերու մէկ մասին:

Ապրիլեան ֆառօրեայ պատերազմը անգամ մը եւս եկաւ ցոյց տալու, որ մեր ժողովուրդը վնասեալ պահերուն գիտէ մէկդի դնել իր ներքին բոլոր տարակարծութիւնները՝ փութալով հայրենիքի պաշտպանութեան:

Որպէս սփիւռքահայեր, Սարդարապատի նակատամարտի տարեդարձին առիթով յիշենք մեր ժողովուրդի արեւմտեան գնդակարձ հերոսներուն հետքերը ու առաջնորդութիւնը սարդարապատեան նոյն ոգիով:

«ՄԱՍԻՍ»

«Չենք Կարող Մոռանալ Այդ 800 Հեկտար Տարածքը» Յայտարարեց Հայաստանի Պաշտպանութեան Նախարարը

Անցեալ շաբաթ, Վիէննայէն վերադարձի ճամբուն վրայ, օդանաւին մէջ Հայ լրագրողներու հետ հարցազրոյցի մը ընթացքին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան յայտարարած էր թէ, ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքին թշնամին գրաւած էր 800 հեկտար տարածք:

Մայիս 23-ին, Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան պատասխանելով այս մասին իրեն տրուած հարցումներուն, հաստատեց որ եղած են զօրքերու նման տեղաշարժեր:

«Թաքցնելու բան չկայ: Եղել է զօրքերի տեղաշարժ, որը այսօր գտնուում է Պաշտպանութեան Բանակի ողջ անձնակազմի՝ տուեալ հատուածներում գտնուող ստորաբաժանումների վերահսկողութեան ներքոյ: Այդ տարածքները ամբողջութեամբ են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածքներում, եւ կարծում եմ, որ բանակցային գործընթացում համապատասխան ընթացք կը տրուի, որը կը վերաբերուի նաեւ այդ տարածքներին»:

Շարունակելով, նախարարը ըսաւ, «Ինչպէս մենք չենք մոռանում մեր բոլոր պատմական տարածքները, այնպէս էլ այդ տարածքները, իհարկէ, չենք կարող մոռանալ: Դրա համար էլ մենք ստեղծել ենք այնպիսի դիրքային պաշտպանութիւն, որ վերահսկողութիւնը ազդեցութեան



Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան

առումով, նախաձեռնողութեան առումով, կրակային խոցման առումով Պաշտպանութեան բանակի անձնակազմի ձեռքին է»:

Այս առթիւ նախարարը յայտնեց որ, Հայաստան կ'աշխատի Ռուսաստանէն վարկով գէնքի արագ մատակարարումները ապահովելու ուղղութեամբ:

«Սպառազինութիւնների մի մասը, որ պատրաստուած էինք գնել, արդէն պատրաստ է: Եւ մենք կը փորձենք սեղծ ժամկէտներում իրականացնել առաջադրուած խնդիրները», - աւելցուց նախարարը:

Յիշեցնենք, որ Ռուսաստանն ու Հայաստանը համաձայնութեան եկած էին, 200 մլն տոլարի Հայաստանին վարկ տրամադրելու շուրջ՝

ուսական գէնք ձեռք ձգելու համար: Օհանեան այս առթիւ տեղեկացուց որ, ինք մի քանի օր առաջ այցելած է Արցախ եւ սահմանի վրայ իրավիճակը հանգիստ է: Ան յայտնեց որ Թալիշ գիւղի բնակիչները այժմ կրնան վերադառնալ իրենց տուները:

«Շատ քիչ են կրակոցները: Իրավիճակը վերահսկուած է Պաշտպանութեան բանակի ստորաբաժանումների կողմից» - ըսաւ նախարարը: ԼՂՀ պաշտպանութեան բանակը ծառայութիւն է իրականացնում այդ շրջանում, հրադարձի ուժերը չարաբերականօրէն պահպանուած է, իսկ կրակոցները շատ չեն, ըսաւ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան:

Հայ Ամերիկեան Խորհուրդը Յուշագիր Յանձնեց Լուսնի Անճելըսի Գերմանիոյ Հիւպատոսարան

Երեքշաբթի, Մայիս 24-ին ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին նաեւ «Կայծ» երիտասարդական միութեան անդամները, այցելեց Լոս Անճելըսի մէջ Գերմանիոյ հիւպատոսարանը եւ յուշագիր յանձնեց՝ ուղղուած Գերմանիոյ վարչապետ Անճելա Մերքելին:

Յունիս 2-ին նախատեսուած է Գերմանիոյ Խորհրդարանէն ներս Հայկական Յեղասպանութեան ճանաչման բանաձեւի քննարկումը: Այս առթիւ գերմանական մամուլը կը տեղեկացնէ որ, Բանաձեւի վաւերացումը անխուսափելի է, քանի որ Խորհրդարանական բոլոր խմբակցութիւնները համաձայնութեան եկած են այս հարցի շուրջ:

Նկատի առնելով, որ Գերմանիա-Թուրքիա յարաբերութիւնը կը գտնուին բաւական բարդ իրավիճակներու առջեւ եւ վերջին պահուն Անճելա Մերքելի կառավարութիւնը կրնայ արգելք հանդիսանալ բանաձեւի վաւերացումին, Հայ Ամերիկեան Խորհուրդը դիմելով վարչապետուհիին կոչ կ'ընէ չենթարկուելու թրջական ճնշումներուն եւ ընթացք տալու, որպէսզի Հայկական Յեղասպանութեան

պատմական իրողութիւնը հաստատուի նաեւ Գերմանիոյ կողմէ: Նման յուշագիր մը յանձնուեցաւ նաեւ Գերմանիոյ դեսպանատունը Փարիզի մէջ, Հայ Եւրոպա-

կան Խորհուրդի կողմէ: Գերմանիոյ վարչապետին ուղղուած յուշագիր բովանդակութիւնը կարելի է տեսնել «Մասիս»-ի Անգլերէն բաժինին մէջ:

Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը իր սոյն տարուայ Ապրիլ 30-ին գումարած լիագումար միստի ընթացքին կատարեց դիւանի փոփոխութիւն: Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկեր Յակոբ Տիգրանեան ժողովին տեղեկացուց, որ անձնական պատճառներէ ելլելով, որոշած է հրաժարիլ ատենապետի պաշտօնէն եւ առաջարկեց կատարել դիւանի փոփոխութիւնը:

Կեդրոնական Վարչութիւնը բարձր գնահատեց ընկերոջ ցարդ կատարած գոհողութիւնները եւ իր ատենապետութեան ընթացքին արձանագրուած յաջողութիւնները: Իր հերթին, ընկեր Տիգրանեան հաւաստիացուց, որ պիտի զօրավիգ կանգնի նոր դիւանին եւ պիտի շարունակէ նոյն եռանդով կատարել Կեդրոնական Վարչութեան անդամի իր պարտականութիւնները:

Ապա, անցնելով նոր դիւանի ընտրութեան, Կեդրոնական Վարչութիւնը միաձայնութեամբ ընտրեց դիւանի նոր կազմ՝ հետեւեալ ընկերներէն բաղկացած.

- Տօֆ. Համբիկ Սարաֆեան - Ատենապետ
- Սեպուհ Գալփաբեան - Փոխ ատենապետ
- Վազգէն Խոտանեան - Ատենապետ
- Վազգէն Գալփաբեան - Գանձապահ

Ս. Դ. Հ. Կ Կեդրոնական Վարչութիւն
Մայիս 20, 2016

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Պետութեան Վախճանը

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Ապրիլեան պատերազմից յետոյ Հայաստանի իշխանութիւնները յայտնուել են բաւականին խղճուկ վիճակում: Ընդ որում՝ պատերազմի արդիւնքների հետ դա կապ չունի: Պարզապէս քառօրեայ պատերազմից յետոյ նրանք փորձում են երկխօսութեան մէջ մտնել ժողովրդի հետ ու մէկ-մէկ նոյնիսկ այնքան են անկեղծանում, որ ճիշտ-ճիշտ բաներ էլ են ասում, բայց միեւնոյն է՝ երկխօսութիւնը չի ստացւում: Ժողովուրդն այս իշխանութիւններին չի վստահում, եւ վերջ: Ու ոչ մի նշանակութիւն չունի, թէ ինչ են ասում:

Տեսէք՝ քանի կար, ասում էին մեր բանակը տարածաշրջանում ամենամարտունակն է ու պատերազմի դէպքում կը հասնի Պաքու, իսկ հիմա անկեղծանում են՝ բանակն 80-ական թուականների գէնքով է կուռում, ու անգամ ութ քառակուսի քիլոմետրը ետ բերելու համար տասնեակ զոհեր կը տար: Առաջ պնդում էին, որ ոչ մի մենաշնորհ էլ չկայ (ի՞նչ մենաշնորհ, ով ինչ ուզի՝ կը ներկրի), իսկ հիմա կոնկրետ քայլերով պայքարում են մենաշնորհների դէմ: Բայց արդէն ուշ է: Իշխանութիւնները յայտնուել են այն ուսուցչի վիճակում, որը տարիներ շարունակ այնքան է խաբել աշակերտներին, որ հիմա եթէ անգամ գրատախտակին գրում է «2+2=4», միեւնոյն է՝ բոլորը սուլում են ու ձեռքի տակ ընկածը շարտում նրա վրայ: Եւ սրանք իսկապէս խղճալի տեսք ունեն,

որովհետեւ քարկոծում են բոլորը՝ անգամ նրանք, ովքեր հասկանում են, որ 2+2 իսկապէս հաւասար է չորսի:

Բայց սա շատ վտանգաւոր է ոչ միայն իշխանութիւնների համար, որովհետեւ իշխանութիւնների նկատմամբ բացարձակ անվստահութիւնն արդէն վերածուել է անվստահութեան նաեւ պետութեան նկատմամբ: Ու դա ոչ միայն զգացում է ամէն քայլափոխի, այլեւ քայլ առ քայլ ներսից քայքայում է պետութիւնը: Տեսէք՝ գններալ Մանուէլը շքախումբը հաւաքել-գնացել է Ղարաբաղ ու ինչ-որ պատմութեան մէջ ընկել, եւ պետական պաշտօնեաները՝ ԱԺ փոխնախագահից սկսած, պաշտպանութեան նախարարով վեր-

կապ չունի, նրա աշխատանքային գրքոյկում գրուած է «Աժ պատգամաւոր»: Ինչ-որ մէկը երբեք էլ չէր կանոնաւոր բանակ ունեցող երկրում ԱԺ պատգամաւորը թիմակիցներին հաւաքի, վեր կենայ գնայ պատերազմ: Բայց մենք այս մասին խօսելու փոխարէն քննարկում ենք՝ տեսնես այդ վիճակում ո՞վ էր ճիշտ, ո՞վ էր սխալ, ո՞վ ում ուշուցց տուեց, եւ ո՞վ ում պատուէրով հրապարակայնացրեց դա:

Մի ուրիշ օրինակ բերենք: Պաշտի գիւղի ժողովուրդը հաւաքուել է, փակել ճանապարհը եւ թոյլ չի տալիս, որ իրենց ջուրը տանեն, Արարատեան դաշտի ինչ-որ օլիգարխներին հողերը ջրեն: Մենք էլ՝ քաղաքական գործիչներով, ակտիւիստներով, լրատուամիջոցներով-բանով, հիմնական հարցը թողած՝ աղմուկ ենք բարձ-

բնակիչները կ'ասեն «էս մեր ջուրն ա, չենք թողնում Արփա-Սեւան թունելով տանէք Սեւան»: Դա եղաւ պետութիւնը:

Հասկանալի է, չէ՞, որ պետութիւնը պիտի որոշի, թէ ինչպէս տնօրինի իր բնական ռեսուրսները (այդ թւում՝ ջրային): Եւ պիտի տնօրինի իշխանութիւնների միջոցով, որին ընտրում է ժողովուրդը: Եթէ իշխանութիւնները վատ են տնօրինում՝ պիտի ուրիշ իշխանութիւններ ընտրի: Եւ ոչ թէ կանգնի-ասի «մենք ձեզ ընտրել ենք, հիմա մեր ջուրը տանում է՞ք», կամ՝ «բա ձեզ էդքան ձայն ենք տուել, դէ մթերած խաղողի փողը տուէք» եւ այլն: Բայց՝ իշխանութիւններին նկատմամբ վստահութիւն չկայ (եթէ լինէր՝ ճանապարհ փակելու փոխարէն կը դիմէին դատարան), մի խօսքով՝ պետութեան նկատմամբ վստահութիւն չկայ: Իսկ սա նշանակում է՝ պետութիւն չկայ, որովհետեւ ո՞ւմ է պէտք այն պետութիւնը, որի գոյութեան մասին չի շեշտուել բոլորը քմծիծաղ են տալիս:

Իշխանութիւնները Հայաստանն այս վիճակին են հասցրել երկարատեւ, հետեւողական «աշխատանքի» միջոցով, եւ իրենց հիմնական նպատակին հասել են՝ ժողովուրդը հրաժարուել է քաղաքական պայքարից: Որովհետեւ եթէ պետութեանը չեն վստահում՝ ի՞նչ նշանակութիւն ունի, թէ ով կը ղեկավարի պետութիւնը: Դրա փոխարէն ամէն մէկն իր փայ կորն է տալիս, մէկը սեփական նախաձեռնութեամբ գնում է առաջին գիծ, միւսն իր այգու ջուրն է պաշտպանում, երրորդն իր տան դիմացով անցնող ճանապարհն է փակում... Բա ուրիշ ի՞նչ անեն, եթէ պետութիւն չկայ:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Ասում էին մեր բանակը տարածաշրջանում ամենամարտունակն է ու պատերազմի դէպքում կը հասնի Պաքու, իսկ հիմա անկեղծանում են՝ բանակն 80-ական թուականների գէնքով է կուռում

Չացրած, փառաբանում են նրա դերակատարումն ապրիլեան պատերազմում: Հետաքրքիր է՝ իսկ որեւէ մէկը ԵԿՄ կանոնադրութիւնը կարդացէ՞լ է, գիտի՞, որ ԵԿՄ-ն հասարակական կազմակերպութիւն է, որի ֆունկցիաների մէջ ռազմական գործողութիւններին անմիջականօրէն մասնակցելը չի մտնում: Ու եւ մէկի մտքով անցե՞լ է, որ Մանուէլ Գրիգորեանը կանոնաւոր բանակի հետ ոչ մի

րացրել, թէ սա ի՞նչ խայտառակութիւն է՝ օրը ցերեկով անարդարութիւն է տեղի ունենում: Մինչդեռ հիմնական հարցը սա է՝ եթէ գետը որեւէ գիւղի միջով է անցնում, գետը գիւղի՞ սեփականութիւնն է, թէ՞ այնուամենայնիւ պետութեան, եթէ որեւէ գիւղի միջով ճանապարհ է անցնում, այդ գիւղացիները երբ ուզենան՝ պիտի փակե՞ն ճանապարհը, թէ ոչ: Է, վաղն էլ, ասենք, Կեչուտ գիւղի

Բազմաչարչար Խնդիր Չդարձնենք Արցախի Համար

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ ռազմական փոխօգնութեան պայմանագիրն արդէն պատրաստ է: Այս պայմանագիրն, ըստ էութեան, Ղարաբաղի անկախութեան ճանաչման «կէս քայլ է», ճանաչման կէս քայլն է:

Սա դեռ ամէնեւէն չի նշանակում, որ պայմանագիրն առաջիկայում կը կնքուի, այստեղ որոշակի խնդիրներ կարող են լինել, օրինակ՝ կապուած արտաքին գործօճանների հետ: Միջազգային դերակատարները, խաղացողները, միջնորդ երկրները: Բոլորի դիրքորոշումը պէտք է հաշուի առնել, իհարկէ, չզիջելով Արցախի շահերը:

Հանրապետականները յայտարարում են, որ պայմանագրի մշակումը աւարտական փուլում է: Ինչ վերաբերում է դրա կնքմանը, ապա այստեղ դեռ յստակութիւն չկայ: Արմէն Աշոտեանի խօսքով, դա կը լինի պատեհ պահին: «Ես տեղեակ չեմ կոնկրետ ժամկէտի մասին, բայց ես գիտեմ, որ այդ աշխատանքները մօտենում են աւարտին, եւ այդ լրջագոյն քաղաքական իրաւական նոր շրջանագիծը, որը միաւորելու է Հայաստանի եւ Ղարաբաղի ռազմաքաղաքական տարածքները, նախագծման փուլից կարծես, թէ արդէն դուրս է գալիս: Մնացածը կախուած է քաղաքական իրավիճակից, սա էլ յստակ պէտք է ասուի, որովհետեւ այդ փաստաթուղթը ստորագրելու որոշումը նոյնպէս քաղաքական է»:

Իհարկէ, ռազմական փոխօգ-

նութեան պայմանագրի կնքումն անհրաժեշտութիւն է, մանաւանդ, եթէ հաշուի առնենք այն, որ դրա մասին հնչել է Հայաստանի նախագահի մակարդակով, ուստի պայմանագրի չկնքումն անլրջութիւն կը լինի:

Յիշեցնենք, որ Սերժ Սարգսեանն Ապրիլի 4-ին ԵԱՀԿ անդամ երկրների դեպատանների հետ հանդիպման ժամանակ ասել էր, թէ հրահանգել է Արտաքին գործերի նախարարութեանը՝ աշխատել Ղարաբաղի հետ՝ ռազմական փոխօգնութեան պայմանագիր կնքելու ուղղութեամբ:

Միջազգային հանրութիւն իհարկէ, կարող է որոշակի անհամաձայնութիւն ցոյց տալ, բայց, սա թէքեւս այն հարցն է, որտեղ հայկական դիւանագիտութեան համար խնդիրներ, կարծես թէ, չպէտք է առաջանան: Սա ուղղակի Արցախի ու Հայաստանի բնական եւ միանգամայն ընկալելի կապի փաստագրում է:

Ինչպէս է իրեն դրսեւորելու Հայաստանի դիւանագիտութիւնը, պարզ կը լինի ապագայում: Ատրպէյջանը վստահաբար առիթներ դեռ գտնի դարաբաղեան գօտում եւ հայ-ատրպէյջանական սահմանին նոր լարուածութիւններ «սարքելու» համար:

Հայկական կողմը պէտք է ունենայ յստակ հիմքեր՝ իրաւական դաշտում Արցախի անվտանգութիւնը պաշտպանելու համար: Իսկ սա այն հարցն է, որտեղ միջազգային որեւէ կառույց եւ օտարերկրեայ դիւանագէտ չպէտք է իրենց պարտքը համարեն՝ «խաղաղ բանակցութիւններին չիտրելնդոտելու» մասին երկար-բարակ ելոյթներ ունենալու համար: Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ ռազմական փոխօգնութեան պայմանագրի ընդունումը չպէտք է դառնայ ԼՂՀ-ն՝ Հայաստանի կողմից ճանաչելու բազմաչարչար հարց:

«ՀԱՅԵԼԻ»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻՒ ՀԱՄԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 ՄԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆԴԱՋԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ՎԱՐՉ ՏՆՕՐԵՆ ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, \$100.00 (First Class) Canada \$125.00 (Air Mail) Overseas \$250.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՆԻՍՎ ԶԵԿՈՒՆԳՈՂՆԵՐԸ ՄՈՒՏԱԿՈՒՄ ԴՐՈՅՔՆԵՐ ԵՆ ՄԱՏՈՆԱՆԶԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔԻ ՄԱԽԱԳԾՈՒՄ

ԵՆԻՍՎ մոնիտորինգի յանձնաժողովի Հայաստանի պարտավորությունների կատարման հարցով համագեկուցողները բերտանացի Ալան Միրը եւ իտալացի Ջուզեպպե Գալարտին կոչ են անում հայաստանեան քաղաքական ուժերին շարունակել քննարկումները նոր Ընտրական օրենսգրքի շուրջ եւ փոխհամաձայնություններ գալ՝ հնարավորինս լայն կոնսենսուս ապահովելու համար:

«Նոր ընտրական համակարգը եւ ընտրակարգը, եթէ պատշաճ կիրառուեն, կարող են Հայաստանը հասցնել նոր կարեւոր փուլի՝ երկրի ժողովրդավարական զարգացման առումով», - յայտարարում են համագեկուցողները, ովքեր Հայաստան էին այցելել Մայիսի 11-12-ը եւ հանդիպել իշխանությունների, քաղաքական ուժերի, քաղաքացիական կազմակերպությունների հետ:

«Միաժամանակ մենք լիովին կհստակ ենք վերահսկել Յանձնաժողովի արտայայտած մտահոգությունները, որ օրենսգրքի խրթին է, ինչը կարող է ազդեցություն ունենալ ընտրական համակարգի վերաբերեալ հանրային վստահությունները՝ դա համարելով իրապես ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար կարեւորա-

գոյն պայման: - «Այդ պատճառով մենք ողջունում ենք իշխանությունների պատրաստակամությունը՝ շարունակել համագործակցել վերահսկողի Յանձնաժողովի հետ, ինչպէս սահմանադրական բարեփոխումների ժամանակ էր», - յաւելել են նրանք:

Համագեկուցողների կարծիքով՝ «Հայաստանում նոր քաղաքական համակարգի ներդրումը կարող է դրականորէն անդրադառնալ այն կուսակցությունների վրայ, որոնք պատրաստ են համագործակցել եւ քաղաքական կոալիցիաներ կազմել, ինչը հակադէպ կը հանդիսանայ այն մտածողությունները, որը, ցաւօք, գերիշխում է Հայաստանի քաղաքական համակարգում՝ յաճախ ի հաշիւ երկրի ժողովրդավարացման»: Այս առումով համագեկուցողները մտահոգութիւն են յայտնում Ընտրական օրենսգրքի նախագծի այն դրոյթների առնչութեամբ, որոնք արգելում են երեքից աւելի կուսակցությունների կազմուած կոալիցիաներին կառավարություն կազմել ընտրությունների առաջին փուլում եւ շատ կարճ ժամանակ տալիս կուսակցություններին իշխող կոալիցիա կազմելու համար՝ նախքան ընտրությունների երկրորդ փուլի նշանակումը:

«Պաշտօնեաներն Այդքան Միամիտ Չեն. Յայտարարած Փողերի Հիմքերը Ունեն»

Պէտք է կոռուպցիայի առաջացման պատճառները թուարկել, յետոյ տեսնել, թէ այդ ուղղութեամբ ինչ է արուած. եթէ պետական կառավարման համակարգը սոցիալապէս պաշտպանուած չէ, իսկ պաշտօնեան չի ստանում այն աշխատավարձը, որը հնարաւորութիւն կը տայ իր անձնական կարիքները բաւարարել, այդ ուսկը միշտ լինելու է: Ազգային ժողովում լրագրողների հետ գրոյցում ասաց ՊԵԿ փոխնախագահ Արմէն Ալավերդեանը:

«Ես չեմ կարծում, որ պաշտօնեաներն այնքան անմիտ ու անզբաղէտ են, որ յայտարարագրում է մեծ գումարներ, դրա հիմքերը չունի: Հաստատ իմացքք, որ հիմքերը ունի», - ասաց նա:

Անդրադառնալով դիտարկմանը, որ յայտարարագրուած ունեցումները եւ նրանց եկամուտների միջեւ ահռելի տարբերություն կայ, Ալավերդեանն արձագանգեց. «Պետական պաշտօնեաներն աւելի լաւ է յայտարարեն իրենց եկամուտները, պետութիւնը իմանայ, որ իրենք այդքան եկամուտ ունեն, որ

յետոյ հսկենք, տեսնենք, թէ այդ եկամուտներն ինչի վրայ ծախսուեց: Երկրորդ՝ եթէ պետական պաշտօնեան ընդհանրապէս չի յայտարարագրում իր եկամուտները, դա աւելի վտանգաւոր է»:

Ինչ վերաբերում է հարցին, թէ որտեղից պաշտօնեաների եկամուտները, Ալավերդեանն ասաց. «Միշտ էլ այդ հարցը դրոււմ էր՝ ինչ-որ պահից մենք պէտք է հարց բարձարցրենք, թէ որտեղից այդ եկամուտները: Պատկերացրէք, օրէնքում հնից եկած եկամտի աղբիւրի հետ կապուած չկայ պահանջ, իսկ ընթացիկ եկամուտը պէտք է ցոյց տան՝ որտեղից»:

Ես չեմ կարծում, որ եթէ մի պաշտօնեայ փող է յայտարարագրել, դա կոռուպցիայի հետ նոյնանուն է: Ես կոռուպցիան աւելի շատ տեսնում են այնտեղ, որ կայ պաշտօնեայ, որը պարզապէս կարողանում է իր բոլոր ծախսերը հոգալ եւ այդ ամէնի համար ծախսել ընդամէնը 2 մլն դրամ», - ասաց ՊԵԿ փոխնախագահը:

Ծառայողական Սերքեաները Ծառայում Են Պաշտօնեաների Ընտանիքի Անդամներին

«Առաւօտ» թերթը գրում է. «Պետական միջոցները ինչպէս յաւաստակով վարչապետ Յովիկ Աբրահամեանին գեկուցեցին, որ 797 ծառայողական մեքենայ կը կրճատուի՝ բացառութեամբ ԱՄՊ-ին, ուստի կանութեանը, քննչական մարմիններին եւ փրկարար ծառայութեանը սպասարկող սպորտմեքենաների»:

Վարչապետի յայտարարութիւնից 1 ժամ էլ չանցած «Առաւօտի» տեսախցիկը ֆիքսեց, թէ ինչպէս էին հարկատուների հաշուին երթեւեկող պետական ծառայողական մեքենաները ոչ թէ պաշտօնեաներին ծառայում, այլ նրանց ընտանիքի

անդամներին: Պուշկինի անուան դպրոցի մօտ մի քանի ըրպէ կանգնելով՝ ականատես եղանք, թէ քանի պետական համարանիշներով, որոնց թոււում էին նաեւ ուժային կառուցներին սպասարկող, ավտոմեքենաներ են մօտենում երեխաներին՝ դպրոցից տուն տանելու համար:

Ինչպէս յայտնի է, այս դպրոցում շատ են մեծահարուստների եւ բարձրաստիճան պաշտօնեաների երեխաները: Երեխաների դէմ ոչ ինչ չունենք, պարզապէս նրանց՝ յարմարուած պայմաններով տուն հասնելը ոչ թէ պետութեան հաշուին պէտք է լինի, այլ ծնողների գրպանի»:


Կոռուպցիայի Դէմ Պայքարը Պէտք Է Սկսել Բաղրամեան 26-ից

Աժ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը համարում է, որ մենք այլեւս լռելու տեղ չունենք այլ ունենք կազմակերպուելու ինդիք: «Այս 800 հեկտարը նշանակում է, որ մենք կորցնում ենք մեր պետականութիւնը», - «Առաջին լրատուական»-ի հետ գրոյցում ասաց նա:

Հարցին՝ Սերժ Սարգսեանը պատրաստ չէր տղաների մահուան գնով վերադարձնել այս 800 հեկտարը, թէ՞ կային կոնկրետ ճնշումներ, Զարուհի Փոստանջեանը պատասխանեց. «Երիտասարդները առաջին օրը իրանց դիմադրութիւնը ցոյց տալով՝ խախտեցին Սերժ Սարգսեանի բոլոր ծրագրերը: Նա պատրաստոււմ էր արցախապատկան տարածքները լուռ յանձնել թշնամուն»:

Զարուհի Փոստանջեանի կարծիքով՝ Սերժ Սարգսեանը այդ կերպ լուծելու էր հարցը, որպէսզի պահպանէր իր բռնագաւթած իշխանութիւնը. «Այժմ ինքն ուզում է մանիպուլյացիաների ձեռով բացատրութիւն տալ, թէ իբր ինքը պատրաստ չէր: Բայց չէ՞ որ եւ՛ մինչեւ քառօրեայ պատերազմը, եւ՛ դրանից յետոյ մենք ամէն օր գոհեր ենք ունենում, եւ ունեցել ենք աւելի շատ գոհեր, քան քառօրեայ պատերազմի ժամանակ»:

Անդրադառնալով վարչապետի յայտարարութիւններին՝ կո-



Աժ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեան

ռուպցիայի եւ մենաշնորհների դէմ պայքարի, ինչպէս նաեւ 797 ծառայողական մեքենաների կրճատման մասին, Զարուհի Փոստանջեանն ասաց. «Մենք պէտք է տեսնենք Բաղրամեան 26-ի շուրջը թիւերը: Այս ամէնը տեսնելուց յետոյ միայն կարող ենք խօսել դրական միտումի մասին»:

Այնուամենայնիւ, մեր գրուցակիցը համարում է, որ մեզանից են կախուած պտուղները. «Մենք ինդիք ունենք սովորելու մեր գինուած ուժերից, մեր 20-ամեայ երիտասարդներից: Մենք բոլորս ունենք պատասխանատուութեան մեր բաժինը»:

Որտե՞ղ Են Սպառազինութեան Համար Յատկացուած Գումարները

«Ժողովուրդ» թերթը գրում է. «Քառօրեայ պատերազմից յետոյ հանրութեան շրջանում ամէնուրեք հնչող հարցերից մէկն է՝ իսկ ուր են գնացել անցած 22 տարիներին բանակի սպառազինութեան արդիականացման համար յատկացուած գումարները»:

Համընդհանուր պահանջն այն է, որ պիւտճէտային միջոցների տնօրինման նախկին վերաբերմունքը փոխուի, եւ այն պետական պաշտօնեաները, որոնք պետպիւտճեն դիտարկել են իբրեւ հարստանալու աղբիւր, հեռանան իշխանութեան ղեկից: Այսօր արդէն ակնյայտ է՝ ՀՀ իշխանութիւնները չեն ցանկանում փոխուել եւ փորձում են շարունակել հանրութեանը «լուրնեղով կերակրել», իբր իրենք բարեփոխումները վաղուց են նախաձեռնել:

Անցած տարիները վերգնահատելու եւ հետեւութիւններ անելու տեսանկիւնից ուշադրաւ է Արցախի վարչապետ Արայիկ Յարութիւնեանի դիտարկումները, որոնք նա ներկայացրեց «Ժողովուրդ»-ի հետ գրոյցում:

«Իհարկէ, ունենք բաւականին մեծ բացթողումներ, կան նաեւ սխալներ, բայց բացթողումներն աւելի շատ են, քան սխալները»:

2015-ին Հայաստանի Քաղաքացիութիւն Է Ստացել 10468 Մարդ

2015-ին ՀՀ նախագահի հրամանով Հայաստանի քաղաքացիութիւն է ստացել 10468 մարդ: Այս մասին Մայիսի 24-ին՝ Աժ-ում հանրապետութեան պետերիջէի 2015-ի կատարողական քննարկման ժամանակ, ասել է նախագահի աշխատակազմի ղեկավար Վրիգն Սարգսեանը:

10468 քաղաքացիներից 3156-ի սիրիահայեր են: Նոյն տարում ՀՀ քաղաքացիութիւնից հրաժարուել է 1476 մարդ: Կեցութեան իրաւունք է ստացել 576 մարդ:

ԼՈՒՐԵՐ

Միջազգային Լրագրողական Խումբը Այցելել է Արցախ



Տեսարաններ միջազգային լրագրողներու Լեռնային Ղարաբաղ այցելութենէն

«Հայաստանի Եւրոպացի Բարեկամներ» (EuFoA) բրիտանական կազմակերպութիւնը Մայիսի 7-ից 15-ը հիւրընկալել է միջազգային լրատուամիջոցների 15 ներկայացուցիչների. որոնք ժամանել են Հայաստան եւ մեկնել Արցախ՝ լուսաբանելու Ապրիլի սկզբին ատրպէյճանական սպորտիստի եւ դրան յաջորդած ժամանակահատուածի զարգացումները:

Լրագրողները այցելել են առաջնագիծ, նկարահանումներ կատարել Մարտակերտի եւ Թալիշի հրետանակրթութեան ենթակառուցվածքներում, գրուցել սահմանային շրջաններից տարահանուած ընտանիքների եւ Ստեփանակերտի գինուորական հիւանդանոցում բուժում ստացող վիրաւոր գինուորների հետ: Լրագրողները հանդիպել են նաեւ ԼՂՀ մի շարք պաշտօնեաների՝ այդ թւում նաեւ ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուկասի, վարչապետ Արայիկ Յարութիւնեանի եւ արտգործնախարար Կարէն Միրզոյեանի հետ:

«Որպէս լրագրողի՝ ինձ համար հետաքրքիր էր բացայայտել նոր մարզկանց ու պատմութիւններ, որոնց միջոցով աշխարհը պէտք է իմանայ Լեռնային Ղարաբաղի մասին», -ասել է լրագրողներից Լիուբա Մաքսիմը, ով նշել է, որ մինչեւ ճամբորդութիւնը արդոտ պատկերացումներ ունէր Արցախի մասին եւ իստ մտահոգուած էր իր անվտանգութեամբ:

«Ես կարողացայ մօտենալ ու ծանօթանալ մի հակամարտութեան, որը ընտրովի ու ոչ լիարժէք է ներկայացուած միջազգային հանրութեանը», - նշել է լրագրողներից Մոնիկա Էլենան:

Լրագրողական խումբի կազմուած է եղել թերթերի եւ հեռուստատեսութեան ներկայացուցիչներից, ովքեր ժամանել են Արցախ Բելգիայից, Իտալիայից, Բրիտանիայից, Գերմանիայից, Լիտվայից, Բուլղարիայից, Մոլդովայից, Ռուսիայից, ինչպէս նաեւ թիմին են միացել երկու հանրայն ֆոտոլրագրողներ ԱՄՆ-ից:

Խումբը կազմուած է եղել հատիքային եւ ազատ լրագրողներից, որոնք ներկայացնում են այնպիսի լրատուամիջոցներ, ինչպիսիք են La Stampa-ն, New Business Europe-ը, BBC-ն, NewsWeek-ը, ինչպէս նաեւ խմբում են եղել Getty Images ֆոտոբանկի եւ New York Times-ի ֆոտոլրագրողները, անգլիայեզու KyivPost-ի խմբագիրները, բուլղարական Btv եւ մոլդովական Atlantic Media հեռուստաընկերութեան նկարահանող խմբերը:

Այցի շրջանակում լրագրողները ուղիղ ղեկորտաժների միջոցով, եւ ապա իրենց երկրներ ժամանելուց յետոյ հրապարակել եւ շարունակում են հրապարակել բազմաթիւ նիւթեր, որոնց յղումները մասամբ հասանելի են EuFoA-ի պաշտօնական Ֆեյսբուքեան էջում:

Ռուսաստանից Հայաստան Զբօսաշրջիկների Հոսքն Աճում է

Ռուսաստանից Հայաստան գբօսաշրջիկների հոսքն աճում է: Այս մասին Մոսկուայում հայ լրագրողների հետ զրոյցում ասել է ՌԴ տնտեսական զարգացման նախարարի առաջին տեղակալ Ալեքսէյ Լիխաչեւը:

Լիխաչեւի գնահատականով՝ ռուսաստանցի զբօսաշրջիկին գրաւում է Հայաստանի պատմութիւնը եւ գեղատեսիլ բնաշխարհը, նաեւ կոլորիտը: Մինչդեռ Հայաստանի ենթակառուցումները, ըստ փոխնախարարի, ոչ միշտ են համապատասխանում անհրաժեշտ չափանիւշերին:

«Երեւանում եւ մօտակայ բնակավայրերում ենթակառուցումները համապատասխանում են նորմերին, սակայն, ընդհանուր առմամբ, ճանապարհների եւ հիւրանոցների մակարդակը դեռ բարելաւման տեղ ունի: Սակայն գնի եւ որակի համապատասխանութիւնը բաւական ձեռնտու է ռուսաստանցի զբօսաշրջիկներին: Ուրախացնող է նաեւ ռուսաստանցիների հանդէպ բարեկամական եւ եղբայրական վերաբերմունքը», - ասել է Լիխաչեւը՝ ընդգծելով, որ, այնուամենայնիւ, ռուսերէնը Հայաստանում սկսում են մոռանալ:

Սարգսեան Ընդունել է Եւրասիական Միութեան Վարչապետներին



Սերժ Սարգսեան կ'ընդունի Եւրասիական երկիրներու վարչապետները

Նախագահ Սերժ Սարգսեանն Մայիս 20-ին ընդունել է Եւրասիական Միջկառավարական Խորհրդի անդամներին եւ Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի (ԵԱՏՀ) կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսեանին, ովքեր Հայաստան են ժամանել Եւրասիական միջկառավարական Խորհրդի հերթական նիստին մասնակցելու նպատակով:

Ընդգծելով, որ Հայաստանում առաջին անգամ է անցկացուած միջկառավարական Խորհրդի նիստ, Սերժ Սարգսեանը վստահութիւն է յայտնել, որ այն արդիւնաւէտ կը լինի: «Մենք բոլորս անդամակցել ենք Եւրասիական Տնտեսական Միութեանը՝ ելնելով մեր տնտեսական շահերից, մեր քաղաքացիների շահերից: Շատ կարեւոր է, որ ընդունուող որոշումները լինեն շօշափելի գործարար միջավայրի, իւրաքանչիւր ապրանքի գնորդի եւ ծառայութեան պատուիրատուի համար: Այդ նպատա-

կին հասնելու համար, կարծում եմ, որ ամենակարեւոր հարցը խոչընդոտների վերացումն է՝ տեխնիկական խոչընդոտների, որոնք իսնագարում են ապրանքների եւ ծառայութիւնների ազատ տեղաշարժին, դրանով իսկ՝ նուազեցնում ինտեգրացիոն գործընթացներից տնտեսական արդիւնաւէտութիւնը», - ասել է նախագահը:

Տիգրան Սարգսեանը ներկայացրել է ԵԱՏՄ-ի՝ ինտեգրացիոն այլ միաւորումների հետ համագործակցութեան հարաւորութիւնները, ինչպէս նաեւ առանձին երկրների հետ յարաբերութիւնների զարգացման հեռանկարները:

ԵԱՏՄ-ի անդամ երկրների տնտեսութիւնների հետագայ բնականոն զարգացման առումով Հայաստանի նախագահը կարեւորել է անվտանգութեան բաղադրիչը եւ այդ տեսանկիւնից ներկայացրել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ վերջին զարգացումները:

ԱՄՆ-ը Մտահոգուած է Թուրքիայում Պատգամավորների Սնձեռնմխելիութեան Վերացման Առնչութեամբ

Վաշինգտոնը մտահոգուած է Թուրքիայի մեջլիսում սահմանադրական փոփոխութիւնների առաջարկի ընդունման առնչութեամբ, որը նախատեսում է վերացնել Խորհրդարանի աւելի քան 100 պատգամաւորների անձեռնմխելիութիւնը: Ինչպէս հաղորդում է «Արմենայրեան»-ը՝ այս մասին յայտարարութիւն է տարածել Պետդեպարտամենտի իստանկի տեղակալ Մարկ Թոնները:

«Ժողովրդավարական հասարակութիւններում ընդհանուր սկզբունք է օրէնքի առաջ բողորի հաւասարութիւնը: Այդուհանդերձ, մենք խորապէս համոզուած ենք, որ քաղաքական խօսքի ազատու-

թիւնը, անգամ այն խօսքի, որը շատերը կարող են հակասական եւ ոչ ճիշտ համարել, պէտք է պաշտպանուած լինի բողորի համար: Սա յատկապէս կարեւոր է, երբ խօսքը վերաբերում է երկրի քաղաքացիների կողմից ընտրուած ներկայացուցիչներին», - ասել է Թոնները: Նա ընդգծել է, որ իրենք ուշի ուշով հետեւում են այս փոփոխութեան հետ կապուած զարգացումներին:

«Եթէ այս փոփոխութիւնը պատճառ դառնայ քաղաքական քննարկումների տարածքի նեղացման, ապա այն կը նուազեցնի Թուրքիայի ժողովրդավարութեան որակը», - նաեւ ասում է յայտարարութեան մէջ:

Սերժ Սարգսեանը Հեռախօսազրոյց է Ունեցել ԱՄՆ Փոխնախագահ Ծօ Բայդենի Հետ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանն ամերիկեան կողմի նախաձեռնութեամբ հեռախօսազրոյց է ունեցել ԱՄՆ փոխնախագահ Ծօ Բայդենի հետ:

ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցների հետ կապերի վարչութեան տարածուած հաղորդագրութեան համաձայն, քննարկուել են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման ներկայ փուլին վերաբերող խնդիր-

ներ: Երկուստեք կարեւորուել է վիեննայում ս.թ. Մայիսի 16-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ԱԳ նախարարների նախաձեռնութեամբ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնների լիարժէք եւ արդիւնաւէտ իրականացումը: Կողմերը միակարծիք են եղել, որ հիմնախնդրի կարգաւորումը հնարաւոր է բացառապէս խաղաղ ճանապարհով՝ ԵԱՀԿ Մինսկի համանախագահութեան միջնորդական ջանքերի շրջանակներում:

Հայկական Ընկերությունը Պետական Սահմանների Շուրջօրեայ Տեսահսկման Սարք է Արտադրել

Գիտա հետազոտական եւ փորձարարական ստրուկտորակաջ աշխատանքներ իրականացնող հայկական «Աստրոմափա» ընկերությունը պետական սահմանների շուրջօրեայ տեսահսկման սարք է ստեղծել:



Հայկական արտադրություն եղող սահմանի տեսահսկման սարք

«Պահանջարկը հաշուի առնելով մենք նախագծել ենք սարքը՝ ռազմական ստանդարտներին համապատասխան: Եւ ցերեկուայ համար է, եւ զիշերուայ: Զերմադրտակը մարդկանց ինֆրակարմիր տիրոջթում արձակած ճառագայթման հիման վրայ կառուցում է ջերմային պատկեր: Բացի այդ՝ մեր սարքը նաեւ կատարում է անընդհատ տեսագրում ուժալ ժամանակում»,- NEWS.am-ի հետ գրոջցում ասաց ընկերութեան տնօրէն Արամ Եղիգարեանը՝ նշելով, որ սարքը կարող է մարդկանց՝ յայտնաբերել եւ ճանաչել տարբեր հեռաւորութիւններից կախուած տեսախցիկի տեսակից:

ընկերութեան արտադրանքով: ՕԴ-2 դիտարկման եւ տեսագրման օպտիկա-էլեկտրոնային համակարգը նախարարութիւնում ցուցադրուել է մէկ ամիս առաջ:

Սարքը, տնօրէնի խօսքով, ոչնչով չի զիջում արտասահմանեան նման սարքերին, աւելին՝ առաւելութիւններ ունի. «Նոյն տեսախցիկով, նոյն ֆունկցիոնով արտասահմանեան սարքը երկու անգամ աւելի թանկ է, բացի այդ՝ մենք գտնուում ենք Հայաստանում, իր անսարքութիւնները անհամամեոշատ արագ կարող ենք վերականգնել որեւէ ինդրի դէպքում»:

«Ես եմ առաջարկել, ինձ հրաւիրել են, ցուցադրել եմ, իրենց հետաքրքրել է: Բայց կարգ կայ, որին պէտք է հետեւեն: Պէտք է համեմատութիւններ անեն, նոր որոշեն, թէ որն են գնում: Հիմա որոշում են՝ գնեն, թէ ոչ»,- ասաց Արամ Եղիգարեանը:

Պաշտպանութեան նախարարութիւնը հետաքրքրուած է «Աստ-

ՊԱՍՔԵՐՈՒ ԵՐԿՐԻ ՏՈՆՈՍԹԻԱ ՔԱՂԱՔԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՆ

26 Ապրիլին Պասքերու երկրի (Սպանիա) Կրիտուքոա նահանգի մայրաքաղաք Տոնոսթիայի (Սան Սեպուլթիանի) քաղաքապետարանին մէջ ներկայացուած խմբակցութիւններու դեկավարներու ժողովի հերթական նիստին ընդունուած է հետեւեալ միացեալ յայտարարութիւնը, որ 5 Մայիսին հաստատուած է քաղաքապետին կողմէ:

որ կը տիրէր նախքան գինադադարի խախտումը, եւ որ չիտոջնդոտուի ստեղծումը այնպիսի մեքանիզմի, որ կարելիութիւն կու տայ մշտադիտարկման ենթարկել գինադադարի դրութեան պահպանումը:

«Այս ծանր պահուն իր գորակցութիւնը կը յայտնէ Ստեփանակերտին՝ վերահաստատելով վերջինիս բնակչութեան խողող եւ բնականոն կերպով ապրելու իրաւունքը:

Կոչ կ'ուղղէ բոլոր կողմերուն, որպէսզի իրենց միջեւ տարակարծութիւնները լուծեն Մինսքի խումբի ծիրին մէջ, երկխօսութեան եւ բանակցութեան միջոցով՝ մնալուն կերպով յարգելով ժողովուրդին կամքը:

Կոչ կ'ուղղէ բոլոր կողմերուն, որպէսզի վերադառնան այն վիճակին,

Այս առումով, կը հայցէ, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ Մինսկի խումբի կատարած բանակցութիւններուն մէջ Լեռնային Ղարաբաղը ունենայ իր սեփական ձայնը:

ՀԱՍՏԱՏՈՒԵԼ ԵՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԻ ԿԱՐԳԱԽՕՍԸ ԵՒ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԸ



Հաստատուել են ս.թ. Յունիսի 24-ին Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի Հայաստանի Հանրապետութիւն այցի կար-

գախօսը եւ տարբերանշանը՝ համապատասխան նկարագրութեամբ: Կարգախօսն է՝ «Այց առաջին քրիստոնեայ երկիր»:

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԹՐՔԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՄՊԻՈՆ ՊԻՏԻ ԳՈՐԾԷ



Թուրքիա ակադեմական արմատներ կ'ուղէ նետել Լիբանանի մէջ: Այս մասին տեղեկութիւնը տրուած է Պոլսոյ Հիւրընդիժթ պարբերականին մէջ:

մէջ անգամ շահերու եւ հակաշահերու ստեղծած յարաբերակցութիւնները փորձաքարի կը գարնեն մէկ ճակատագրի, մէկ երդիքի ու մէկ քաղաքացիութեան դրօշին տակ ապրող քաղաքացիները: Այսօր չենք կրնար ըսել, որ լիբանանեան համալսարանին կողմէ առնուած այս քայլը արդէն կատարուած իրողութեան մը առաջին արձագանգն է: Մենք մեզի իրաւունքը չենք տար նման վարկածով առաջնորդուելու:

Թերթին մէջ յատուկ հողորդագրութեամբ մը կը ծանուցուի, որ Անգարայի պաշտօնական նեցուկը վայելող «Եռուս էմրէ» հիմնարկը նախաձեռնած է թրքագիտութեան ամպիոն մը բանալ Լիբանանի պետական համալսարանին մէջ: Այս առումով տուեալ հիմնարկի տնօրէն ձէնկիդ էրօղլու վերջերս այցելած է Պէյրութ եւ Լիբանանի մօտ Թուրքիոյ դեսպան Չաղաթա իրճիջիսի ներկայութեամբ եւ «օրհնութեամբ», Լիբանանի պետական համալսարանի նախագահ Ատնան Ալ Սայէտ Հիւսէյնի հետ նախնական համաձայնութիւն մը ստորագրած է, որուն հիմամբ կողմերը յառաջիկայ Յուլիսին վերջնական պայմանագիր պիտի ստորագրեն եւ բացումը կատարեն Լիբանանի պետական համալսարանի «թրքագիտութեան ամպիոններին»: Այս բոլորը անշուշտ կը կատարուին լոյս աչքով, հասարակութեան աչքերուն եւ մեր լիբանանահայերուս վրիպող ուշադրութեան առջեւ:

Սակայն մէկ բան յատակ է, որ ընթացող գործընթացներուն մէջ մենք եւս մեր մեղքի բաժինը ունինք: Այս մենք լիբանանահայերս, որ ցաւօք եւ մինչեւ օրս չենք յաջողած Հայաստանի Հանրապետութեան Պետական Համալսարանի հետ առկայ հնարաւորութիւններով հայագիտութեան ամպիոն մը հաստատել Պէյրութի մէջ: Տակաւին մեր ունեցածը յօդս տալով կը շարունակենք ապրիլ երազներու փողոկերայ աշտարակին մէջ ու շատախօսութեան հասնող գովերգումներով ու ներքին ճակատի վրայ փուճ յոխորտանքներով աշխարհին կը ներկայանանք, որպէս սիրուքի հայտնութեան սիրտ եւ օրրան: Հարցումը, որ բարձրաձայն պէտք է հնչէ այսօր, մեր ինչ ընեն է: Ի՞նչ ընել, երբ լիբանանահայ համայնքի զգացումներու եւ պատմական յիշողութեան ամենավսեմ զգացումը կ'ոտնահարուի եւ այն ալ Լիբանանի պետական համալսարանի պէս բարձր ակադեմական հարթակի մը վրայ:

Մեղադրական ոչ մէկ շեշտ պէտք է տեսնել նման լրատուութեան մը դիմաց քաջ գիտնալով, որ Նէօօսմանիզմի իր հին-նոր դիմակով ներկայացող պաշտօնական Անգարա ծրագիր ունի իր ձեռքերը երկարել ու հասնիլ ամէն տեղ: Պետական քաղաքականութեան արդիւնքով տարուող այս աշխատանքներուն մէջ գարմանալի չէ նաեւ, որ Լիբանանի մէջ օրըստօրէ նոր ծաւալ եւ աշխուժութիւն կը ստանան առ Թուրքիա սէրն ու համակրանքը: Պատմութեան դասերու ոչ մէկ ենթաշերտին մէջ կարելի չէ տեղադրել այս մօտեցումը եւ ամէնէն աւելի քաղաքակիրթ համարուած հասարակութիւններու

Ի՞նչ ընել, երբ հաւաքապէս կ'անտեսուի մեր յիշողութեան եւ ցաւի ամբողջ դիպաշարը: Եւ վերջապէս ի՞նչ ընել, երբ նման արարքներու լոյսին տակ մենք զմեզ կը զգանք անկարելորդ ու անտեսուած:

Լուծումներու մասին մտածելը այսօր մեզի, բոլորիս համար անյետաձգելի անհրաժեշտութիւն է: «ԱՐԱՐԱՏ»

Տարբերանշանի նկարագրութիւնը:

Թիւնը Հայաստանում հռչակուեց պետական կրօն:

Տարբերանշանը շրջանաձեւ է: Տարբերանշանի հիմքում խոր վիրապի վանքի եւ բիբլիական Արարատ լեռան պատկերն է: Ս. Գրիգոր Լուսաւորիչը շուրջ 14 տարի եղել է բանտարկուած Արտաշատի վիրապում, որի վրայ եւ յետագայում կառուցուել է վանքը: Այնուհետ Սուրբ Գրիգորը դարձաւ հայոց ազգի առաջին Հայրապետը, եւ Տրդատ Գ Մեծ թագաւորի հետ համատեղ ջանքերով քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուեց պետական կրօն:

Տարբերանշանի գոյներն են մանուշակագոյնը եւ դեղինը, որոնք արտացոլում են Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Հռոմի Կաթողիկէ Եկեղեցու պաշտօնական գոյները: Տարբերանշանում նաեւ ներառուած են երկու եկեղեցիների զինանշանները:

Շրջանակի երկայնքով գրութիւնն արտացոլում է բուն այցը՝ «Ֆրանցիսկոս Պապ. Հայաստան, 24-26 Յունիս, 2016»:

ՈՒՍԱՏՈՒՄԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴՈՒՄ ԱՐՄԱՏՆԵՐ «ՎՏԱՆԳՆԵՐ»

- «Ռուսաստանի համար Հայաստանը մանրադրամ է» (lin.am, iragir.am):
- «Ռուսաստանը ԼՂ-ն յանձնելու գործարք է կնքել Ատրպեյճանի հետ» (norlur.am):
- «Ռուսաստանն ու Թուրքիան խնդիր են դրել վերացնել Հայաստանը» (iragir.am):
- «Ռուսաստանը շտապ կապիտուլիացիա է պատրաստու՞մ Դարաբաղում» (iragir.am):
- «Ռուսաստանը ծրագրում է Հայաստանի պարտութիւնը» (iragir.am):
- «Ռուս-ատրպեյճանական դաւադրութիւն՝ ընդդէմ Դարաբաղի» (168.am):
- «Ռուսաստանն ու Թուրքիան բնական դաշնակիցներ՝ ընդդէմ հայ ժողովրդի ազգային շահերի» (iragir.am):
- «Փորձագէտներ՝ Մոսկուայի կարող է փորձել «գոհաբերել Հայաստանի շահերը» (azatutyun.am):

ՎԱՀԱՆ ԻՇԽԱՆՅԱՆ

Շնորհակալութիւն պատմութեան դոկտոր Արա Սանջեանի խմբագրելու եւ օգտակար լրացումներ անելու համար:

Սրանք վերջին տարիների վերնագրեր են հայկական տարբեր լրատուամիջոցներից: Այսպիսի դաւադրական վերնագրերի շարանը կարելի է շարունակել:

Միամիտ ընթերցողները, այս վերնագրերը կարդալով, պարբերաբար սթրեսի մէջ են ընկնում, իսկ ընթերցողների ստուար մասը միամիտներ են ու հաւատում են մամուլին: Նոյնիսկ այն ընթերցողները, ովքեր մամուլի նկատմամբ թերահաւատ են, պարբերաբար տարբեր թերթերում ուսական դաւադրութեան մասին կարդալով՝ թեթեւ խուճապի մէջ են ընկնում:

Հեւեռադականօրէն տարածուող ուսական դաւադրութեան վերաբերեալ քարոզչութիւնը հասարակութեան մէջ գնալով աւելի է տարածում այն վախը, թէ Ռուսաստանը հերթական անգամ պէտք է ծախի Հայաստանը եւ արմատաւորում հակառուսական տրամադրութիւններ:

Ռուսաստանը կողմից օգտագործուած լինելու պարանոյեան ահազանում է յատկապէս, երբ Ռուսաստանի ղեկավարները հանդիպում են Թուրքիայի կամ Ատրպեյճանի ղեկավարների հետ եւ մէկ էլ, երբ սրում է հայ-ատրպեյճանական հակամարտութիւնը:

Ականատես եմ եղել, թէ ինչպէս են մարդիկ վախն աչքերում ասում, թէ հետա ուսները Հայաստանը ծախում են. նրանք հաւատում են, թէ Մոսկուայում մի այնպիսի գաղտնի դաւադրութիւն է հիւսւում, որի արդիւնքում Թուրքիան կամ Ատրպեյճանը կը

ներխուժեն ու կը կոտորեն հայ ժողովրդին:

Կարծես Ռուսաստանի ինչ-որ գաղտնի գործակալութիւններում յատուկ հայերին վերացնելու մի բաժին կայ, որտեղ մշակուած են Թուրքիայից ու Ատրպեյճանից ինչ-որ գիշումներ կորզելու դիմաց հայերին ու Հայաստանը օգտագործելու գաղտնի պլաններ, որոնց հայ հասարակութիւնը տեղեակ կը լինի՝ միայն երբ արիւն հոսի: Ռուսաֆոք մամուլն ասում է. «Ռուսը հային «տնկելու» հազար ձեւ գիտի՝ բոլորն էլ թուրքի ձեռքով»:

Հայկական ուսաֆոքի նոր ալիքը ինքն իրեն չի առաջացել, այն վերջին շրջանում աշխարհում հրահրուող ուսաֆոքի մի մասն է:

Արեւմուտքը, մասնաւորապէս՝ ԱՄՆ-ն, հակամարտութեան մէջ մտնելով Ռուսաստանի հետ, յետ-սովետական բոլոր հանրապետութիւններում մեծ գումարներ ծախսելով՝ բորբոքում է հակառուսականութիւնը, եւ Հայաստանում էլ աւանդական ուսաֆոքերին գումարուել են նոր ձեւաւորուած արեւմտեան քաղաքականութեան ազդեցութիւնը տարածող գործիչներ ու մամուլ, որոնք հետեւողականօրէն արթնացնում եւ օգտագործում են հայերի՝ Ռուսաստանից վախը ու ահաբեկում հասարակութեանը:

Հասկանալու համար, թէ ինչո՞ւ են ուսական դաւադրութեան մասին նիւթերն աչքպէս հաւատները շարունակում եւ հեշտ խուճապ առաջացնում, ինչո՞ւ է արմատացած այդ ուսաֆոքիան, պէտք է պարզել, թէ որտեղի՞ց է այդ վախը:

Հայկական ուսաֆոքիան կապուած է հիմնականում երեք պատմական իրադարձութեան հետ.

1-ին՝ 1914-1915 թուերին հայոց ցեղասպանութեան ժամանակ Ռուսաստանի դիրքը: Ռուսաստանը քննադատող հայ պատմագրու-

թեան մէջ ընդունուած է, որ երբ Օսմանեան կայսրութիւնում տեղահանում ու կոտորում էին հայերին, ուսական յաղթական բանակը առաջ չէր շարժուած, որ կանխեր կոտորածները:

2-րդ՝ 1920-1921 թուականներին Բոլշեւիկեան Ռուսաստանի դաշինքը Քեմալական Թուրքիայի հետ, որի արդիւնքում Հայաստանի տարածքներն անցան Ատրպեյճանին ու Թուրքիային:

3-րդ՝ 1991-ին Սովետական բանակի Կոլցօ օպերացիան, երբ սովետական բանակի օգնութեամբ ատրպեյճանցիներն էթնիկ գտումներ արեցին Գետաշէնի ենթաշրջանում:

Ռուսաֆոքիայի պրոպագանդիստները ժամանակ առ ժամանակ այս իրադարձութիւնները մէջտեղ են հանում ու յայտարարում, թէ Ռուսաստանի հակահայկական դաւադրութիւնը կրկնուելու է:

Ընդհանրապէս, ազգային սնափառութիւնը չի սիրում խոստովանել, որ սեփական կորուստները լինում են նաեւ սխալ քաղաքականութեան պատճառով եւ, սխալներն անտեսելով, դրանց համար մեղադրում են միայն դրսի ուժերին. այդպէս արեւելահայութեան սնափառութիւնն իր կորուստները բացատրում է Ռուսաստանի դաւաճանութեամբ, իսկ արեւմտահայութիւնը՝ Անգլիայի ու Ֆրանսայի դաւաճանութիւններով:

Ռուսաֆոքիայի ֆոնին անհրաժեշտ է պատասխանել հարցերին, թէ ինչո՞ւ է Ռուսաստանը տարբեր պատմական իրադրականներում ոչ հայնապաստ կամ «հակահայ» դիրք գրաւել, կարո՞ղ էին, արդեօք, հայ ղեկավարները խուսափել Ռուսաստանի վտանգից, որպէսզի պարզ լինի, թէ ինչքանո՞վ է հնարաւոր այդ քաղաքականութեան կրկնութիւնը:

Առաջին աշխարհամարտը եւ Ռուսաստանի դիրքը հայոսթեան ցկատմամբ

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից հայկական կազմակերպութիւնները նախաձեռնում են կամաւորական շարժում ուսական բանակի կազմում Օսմանեան կայսրութեան դէմ կռուելու համար: Հայ վերնախաւը յոյս ունէր, թէ միանալով դաշնակիցներին ու նրանց բանակներում կռուելով՝ յաղթանակի դէպքում նրանք Օսմանեան կայսրութեան հայ համայնքներին անկախութիւն կը տան:

Ռուսական բանակի կազմում ձեւաւորում են 5-8 հազար մարտիկներով հայ կամաւորական ջոկատներ:

Նաեւ 1916-ից յետոյ ֆրանսա-

կան բանակում ձեւաւորում է հայ կամաւորներից բաղկացած լեգիոն:

1914թ. Նոյեմբերի 1-ին բացուեց ուս-թուրքական ճակատը, եւ ուսական բանակը, որի կազմում կռուում էին հինգ հայկական կամաւորական ջոկատներ, Յունուարին վերջնականապէս ջախջախեց օսմանեան բանակը Սարիղամիշի ճակատամարտում:

Թուրքական բանակի հրամանատարն էր օսմանեան ուսական նախարար էնվեր փաշան, ով հագրէ է փրկում եւ կատաղած վերադառնալով Ստամբուլ՝ իր պարտութեան համար մեղադրում է հայերին:

Ռուս մեկնաբան Եուլիա Լատինինան գրում է. «Ինչպէս բոլոր պարտութիւն կրած հրամանատարները, նա էլ վերադառնալով Կոստանդնուպոլիս՝ յայտարարում է, որ դաւաճանութեան պատճառով էր պարտութիւնը: «Ինչ դաւաճանեցին». սա սիրելի խօսքն է այն ժողով հրամանատարների»:

Սարիղամիշի ճակատամարտից յետոյ հարաւային ճակատում ուսական բանակը դադար է առնում: Հենց այդ ժամանակ էլ սկսում են հայերի ջարդերը: Մի քանի ամիս անց՝ գարնանը, ուսական բանակն առաջ է շարժում եւ գրաւում վանը: Հայ պատմագրութեան եւ մտաւորական որոշ շրջանակներում վստահ են, որ եթէ էլի առաջ շարժուէր, ապա կը փրկէր Մուշի եւ միւս շրջանների հայերին, բայց փոխարէնը ամրանը նահանջում է (հայ հեղինակներն այդ նահանջը անուանում են «կեղծ»), ու ուսական բանակի հետ գաղթում է թուրքական ջարդերից ինքնապաշտպանութեամբ փրկուած վանի եւ ամբողջ վասպուրականի բնակչութիւնը: Որոշ պատմաբաններ գրում են, որ եթէ ուսական բանակն աչպիսի նահանջներ ու դադարներ չտար, ապա կը փրկուէին հազարաւոր հայեր: Մասնաւորապէս՝ Լէօն գրում է. «Ինչ նպատակ ունէր այդ նահանջը, բացառում էին զանազան եղանակներով: Բայց այդ նպատակներից մէկն էր եւ հայերի բնաջնջումը, որ եւ իրականացուեց ամենասարսափելի յաջողութեամբ» [1]:

Պէտք է հաշուի առնել, որ մինչեւ 30-ականների կէսը խորհրդային իշխանութիւնն ամէն ինչում մեղադրում էր ցարիզմին, եւ Լէոն, այդ ժամանակների կոնիւնկտուրային համապատասխան, հայերի կորուստների մեղքը բարդում է Յարիզմի վրայ, եւ այդ շրջանում գրած նրա երկու հակառուսական գրքերը՝ «Անցեալից»-ը եւ «Ռու-

Շարք էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՀՆՉԱԿԵԱՆ 6-ՐԴ ԳՈՒՆԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ՝ ՊԱՆԴՈՒԽՏԸ

1918 թուականի Մայիս 21-29 տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտը, որ աւարտեցավ Հայ ժողովուրդի յաղթանակով՝ ընդդէմ թրքական բանակներուն:

Սոյն ճակատամարտի ընթացքին կարեւոր դարակատարութիւն ունեցաւ նաեւ Հնչակեան 6-րդ գունդը, որ կը գլխաւորէր Միքայէլ Սերեան, ծանօթ Պանդուխտ անունով:

Տօքթ. Եղիկ Երեմեանի «Յաւերժ ճամբու Կերտիչներէն» գրքին մէջ ներկայացուած է Պանդուխտի գործուէութիւնը այդ ժամանակաշրջանին:

Ստորեւ, հատուածներ Սարդարապատի ճակատամարտին Պանդուխտի մասնակցութենէն, արտատպուած սոյն հատորէն:

1917 Փետրուարեան Յեղափոխութենէն ետք, ռուսական բանակը կը սկսի դասալքուիլ ու նահանջել: Ռազմաճակատին վրայ մնացող ռուսական բանակին, հայ կամաւորական գունդերու մնացորդացին եւ արեւմտահայ հայ-գուկապետներուն ուսերուն կ'իյնայ պաշտպանել Հայաստանի սահմանները: Վերջիններուն թուին էր Պանդուխտ: (Հայկական ազգ. կորպուսը կը գտնուէր իր կազմաւորման փուլին մէջ): Պանդուխտ իր գործադրողով կը պաշտպանէ Բարթոլոմէի շրջանը: Թրքական հակայարձակումը չ'ուշանար եւ Պանդուխտ եւս, ծանր մարտեր մղելով կը նահանջէ դէպի Էրզրում:

1917 Սեպտեմբերին Թիֆլիսի մէջ տեղի կ'ունենայ Հայ Ազգային Համախորհրդակցութիւնը, որուն կը մասնակցի Պանդուխտ որպէս կամաւորական ճիւղ գունդի ներկայացուցիչ:

Թրքական բանակներուն դիմագրաւելու համար, Ազգ. Բիւրոյի նախաձեռնութեամբ, Թիֆլիսի մէջ, գոր. Անդրանիկի հրամանատարութեան տակ կը կազմուի գիւնուորական միաւոր մը՝ Հայաստանի Երկրագահ Զօրամասը (ՀԵԶ): ՄԴ-ՀԿ Թիֆլիսի Կեդր. Վարչութիւնը, իր 1918 Յունուար 30-ի հեռագրով ՄԴ-ՀԿ Ամբիկայի շրջանի Կեդր. Վարչի Մարմնին կը տեղեկագրէ թէ «Ազգային Ժողովի Զինուորական Կոմիտէն, մեր առաջարկութեամբ, ընկեր գաբիդան Պանտուխտին նշանակել է ժեներալ Անդրանիկի բանակին մէջ մի գործառնի հրամանատար»: Փաստորէն, մինչեւ Անդրանիկի Էրզրում հասնելը, ռազմաճակատի գիծին մօտիկ, Սարիղամիշ գտնուող Պանդուխտ կը դառնայ ՀԵԶ-ի իրողական հրամանատարը:

Անոր պարտականութիւն կը տրուի մէկ կողմէ կատարել գորահաւաք եւ միւս կողմէ հսկողութիւն սահմանել նահանջող ռուսական բանակին լքած զինապահեստներուն վրայ: Այդ շրջանին գոր. Անդրանիկի, Պանդուխտի եւ ռուս. բանակի հրամանատարութեան միջեւ փոխանակուած գիւնուորական բազմաթիւ հեռագիրներ ցոյց կու տան, թէ ինչպիսի դժուարին եւ պատասխանատու պարտականութիւն էր Պանդուխտին կատարածը: Անոր գործը աւելի կը դժուարանար, որովհետեւ ռազմաճակատին վրայ կը տիրէր քաոս: Ստեղծուած էին շատ մը ազգային, կուսակցական եւ գիւնուորական մարմիններ, որոնք կը գործէին ինքնագլուխ եւ առանց պահուն լրջութիւնը գնահատելու:

Փետրուար 28-ին Էրզրում կ'իյնայ: Ընդհանուր նահանջին, Պանդուխտ եւս կը նահանջէ դէպի

Սարիղամիշ: Թրքական բանակին յաջորդ հարուածը կ'ուղղուի դէպի Սարիղամիշ: Պանդուխտ կը կազմակերպէ Սարիղամիշի նահանջը, որուն շնորհիւ հնարաւոր կ'ըլլայ գաղթական բազմութիւնն ու ռուսական բանակին մթերքները ապահով փոխադրել թիկունք:

Սարիղամիշէն յետոյ Թրքական բանակները երեք ուղղութիւններով կը շարունակեն իրենց յառաջխաղացքը: Անդրանիկ, իր հանդէպ եղած շարախօսութիւններէն ազդուած, կ'ապրի յուսահատական պահեր ու իր հաւատարիմ զինակիցներով կը հեռանայ ռազմաճակատէն: Պանդուխտ, իր կամաւորներով կը մնայ ռազմաճակատի տաք գիծին վրայ ու քայլ առ քայլ կը կազմակերպէ Շիրակի եւ Արարատեան դաշտի գիւղացութեան եւ հոն տեղակայուած արեւմտահայ գաղթականութեան ընդդիմադրութիւնը գերակշիռ Թրքական բանակին դէմ:

Այս մասին, Մոսկուայի ընկերային գիտութիւններու ակադեմիայի ակադեմիկոս Հենրիք Մեւիքեան կը գրէ. «Պատմական նիւթերի յայտնաբերումը, դրանց նորովի անկողմնակալ մեկնաբանումն ու գնահատումը մեզ հանգեցրել է այն հետեւութեան, որ 1918 թ. Մայիսին Շիրուանի Սոգիւթլու-Տաշղալա պաշտպանական գծի ստեղծումը, Սոգիւթլույում ու դրա շրջակայ լեռներում Սասունից, Մուշից, Արագածոտնի գիւղերում ապաստանած մի քանի տասնեակ հազար փախստականներին ու տեղական բնակչութեան գոյապայքարի ոգին, գլխաւոր կազմակերպիչը Պանտուխտն էր՝ Միքայէլ Մեֆերեանը (Պանդուխտին որպէս ազգանուն, Սերեանին գուգահեռ, թիւրիմացաբար գործած է նաեւ Սեֆերեան ազգանունը. - Ե.Ճ.):

Սոգիւթլուի ինքնապաշտպանութիւնը կազմակերպելէն ետք, Պանդուխտ 200 հեծեակներով կը միանայ Սարդարապատի մէջ Թրքական բանակները դիմակայելու պատրաստուող հայկական ուժերուն: Պանդուխտ կը տեղակայուի Արագածի լանջին եւ Մայիս 27-ին, արագ ու անակնկալ յարձակում կը կատարէ Թրքական բանակի թիկունքին՝ Զիմնի Լըռ եւ Թուլքի Տէքէր (թիւ 440 բլուրներ) բարձունքներուն վրայ տեղակայուած Թրքական բանակի հրամանատարութեան վրայ: Կը գերեզարէ թուրք հրամանատարներ եւ կը լռեցնէ հոն տեղակայուած թնդանօթները: Թրքական բանակը կը մատնուի խուճապի եւ կը դիմէ անկազմակերպ նահանջի: Հայկական բանակի կեդրոնական թեւը կ'օգտագործէ առիթը եւ կ'ամբարապնդէ յաղթանակը: Պանդուխտ



իր հերթին, կը համալրէ իր ջոկատը լեռները ապաստանած Շիրակի դաշտի գիւղացիներով, այդ կը հասցնէ 1000 կուուղի ու կը շարունակէ հալածել Թրքական նահանջող բանակը:

Հայկական բանակի պաշտօնաթերթ «Ռազմիկ» թերթը, յաղթանակին երկրորդ ամեակին առիթով կը գրէ. «Մեր թնդանօթները մեր շղթայի ետեւից ռմբակոծում էին թուրքերին, Պանդուխտը իր 200 հոգի մշեցի ձիաւորներով աջից հարուածում էր օսմանցիներին, խլել էր նրանցից մի թնդանօթ եւ գերի էր վերցրել 4 օսմանցի սպայ: Սարդարապատի մօտ գլխաւոր շղթան առանց մի գնդակ արձակելու առանց մի գոհ տալու մօտեցաւ բլուրին, թուրքերը սարսափած, փախան, թոններով դիակներ եւ բազմաթիւ վիրաւորներ»:

Պանդուխտի նախաձեռնած գիւնուորական այս փայլուն գործողութիւնը կը նկատուի Սարդարապատի ճակատամարտին յաղթանակը ապահովող ամենէն կարեւոր գործօնը, որուն մասին կ'անդրադառնան պատմաբաններ Յարութիւն Թուրչեան, Մ. Աղայեան, Երուանդ Սարգիսեան, Սերժ Աֆանասեան, Հրանդ Աւետիսեան եւ ուրիշներ:

Սարդարապատի ճակատամարտէն եւ Պաթլուի դաշնագիրէն ետք հայ-թրքական սահմանագիծը կ'ապրի յարաբերաբար խաղաղ շրջան մը: Գոյապայքարը կը տեղափոխուի Զանգեզուր-Ղարաբաղ լեռնաշխարհ՝ ուր կը գտնուէր գոր. Անդրանիկ իր հրամանատարութեան տակ գործող Առանձին Հարուածող Զօրամասով:

Հոկտեմբերին, Պանտուխտ իր խումբով կը բարձրանայ Զանգեզուր ու կը միանայ Անդրանիկին: Այս վերամիացումը կը կատարուի այնպիսի պահու մը, երբ Անդրանիկի հաւատարիմ եւ փորձառու զինուորականներէն շատեր, տարբեր պատճառներով կը հեռանային անոր գործառնէն: Պանդուխտի նման փորձառու եւ վստահելի ոյժի մը վերայայտնուիլը, նոր եռանդ եւ ոգի կու տայ Անդրանիկին եւ զինուորներուն:

Պանդուխտ անմիջապէս կը նշանակուի Ղափանի Ազգային Խորհուրդի անդամ եւ Ղափան-Մեղրի շրջանի Առանձին Հարուածող Զօրամասի ստորաբաժանումներուն եւ տեղական ինքնապաշտպանական ջոկատներուն ընդհանուր հրամանատար:

Նոյեմբերի վերջաւորութեան Անդրանիկ կը շարժի դէպի Ղարաբաղ իսկ Պանտուխտ կը նախաձեռնէ հարաւային Զանգեզուրը թուրք-թաթարական վտանգաւոր որջերէն վտանգագերծելու արշաւը: Պանդուխտը, արագ յարձակողականներով, ոչ միայն կը յաջողի իր նպատակին մէջ, այլեւ՝ «տեղի ժողովուրդին, թէ գաղթականութեան եւ թէ եկած զինուորներին» կեցութեան համար կ'ապահովէ մեծաքանակ աւար:

Երբ Անդրանիկ եւ Պանդուխտ Ղարաբաղի եւ Զանգեզուրի մէջ յաղթական մարտեր կը մղէին, Պաքու հաստատուած անգլիական բանակի ընդհանուր հրամանատար գոր. Թոմասի պատուիրակները կու գան Անդրանիկի մօտ եւ կը համոզեն անոր դադարեցնել զինուորական գործողութիւնները: Անդրանիկ տեղի կու տայ ու կը վերադառնայ Գորիս: Պանդուխտ սակայն չ'ուզէր բաց թողնել առիթը եւ կը շարունակէ իր յաղթական յարձակումները: Անդրանիկ իրերապաշտպան քանի մը հրահանգներով կը պարտադրէ Պանդուխտին վերջ տալ ռազմական գործողութիւններուն:

Պանդուխտ կը յօժարի: Անոր համար այլեւս Զանգեզուրի մէջ ընելիք բան չէր մնար: 1919 Փետրուարին, համախոհներու խումբով մը կը վերադառնայ Երեւան, ապա Սարիղամիշ:

- Ուրեմն եկ պայմանաւորուենք այսպէս: Քանի որ դու գիտես մեր տունը, արի մեզ մօտ, երկարօրէն կը խօսենք, ու կրկին

կ'անդրադառնանք յոյժ կարեւոր այդ նիւթին, քո ընդգծուած ու մոլեգին հետաքրքրութիւնը տարիներ շարունակ ինձ տանջող հարցի վերաբերեալ, ինձ կրկին մտածել է տալիս, որ անհրաժեշտ է մէկ անգամ եւս լրջօրէն անդրադառնալ այժմ արդէն աւելի քան լրջացած ու վտանգաւոր դարձած այդ թեմային: Հը՛..., ի՞նչ ես ասում Չարա, գալի՞ս ես...

- Շատ լաւ մատար, ես տաստանըհինգ րոպէից ձեր տանը կը լինեմ, դուք արդէն ինձ վախեցնում էք:

Իսկապէս էլ, շատ կարճ ժամանակ անց մեր տան շեմից ներս մտաւ բաւական բարեսէս արտաքինով, քառասունին բարեւ ասող օրիորդ Չարուհի-Չարան:

- Կը ներէք պարոն Անասեան, համարձակութեանս համար, բայց ձեր՝ միանգամայն արգարացի պայքարը՝ վերականգնելու համար Հայաստանի հիմնի խաչատուրեանական երաժշտութիւնը, ցանկալի արդիւնքի չհասաւ, - հագիւ ոտքը դրան շեմից ներս դրած «վրայ տուեց» խօսակիցս:

- Այո, չհասաւ աղջիկս, որովհետեւ մեր ազգային հարցերի արժեւորման նախանձախնդիր անձնաւորութիւնները, այս պարագային հիմնականում երաժիշտ-կոմպոզիտորները, որոնք տարիներ առաջ մրցոյթին էին ներկայացրել իրենց յօրինած Հայաստանի հիմնը, նրանցից ամէն մէկը ցանկանում էր չաղթող դառնալ այդ մրցոյթում: Թող ներուի ինձ, նրանք անհամեստաբար «ոտք մեկնեցին» խաչատուրեանի հետ՝ աւելորդ բամբասանքի նիւթ տեղծելով լրջապատի, մանաւանդ երաժիշտների համար: Այդ տարիների մեր աւագագոյն կոմպոզիտորներ էդուարդ Միրզոյեանն ու Կոնստանտին Օրբելեանը դէմ էին այդ մրցոյթին: Նրանք խաչատուրեանի «կողմնակիցներից» էին:

- Բայց, դարձեալ ինձ կը ներէք մատար, դուք երբեւէ ոչինչ չէք գրել այդ մասին, իսկ ինչո՞ւ էք հիմա արտայայտուում:

- Ի՞նչ ասեմ սիրելիս, Չարա ջան, այդ մրցոյթին ներկայացուած էր նաեւ խաչատուրեանի երաժշտութիւնը, որ ես էի ներկայացրել մրցոյթի յանձնաժողովին՝ Մշակոյթի նորանշանակ նախարար Տիկին Յասմինի Պօղոսեանի միանգամայն ոգեւորիչ յանձնարարափանին տուրք տալով: Մենք համոզուած էինք, որ յաղթելու էր խաչատուրեանի հիմնը: Մարդկային բնականոն տրամաբանութիւնը յուշում էր, որ ամէն մի խելամիտ մարդ, սուեալ դէպքում կոմպոզիտոր, իրեն թոյլ չէր տալ «մրցել» խաչատուրեանի համաշխարհային ճանաչման արժանացած երաժշտութեան հետ: Ըստ իս, նոյնիսկ անհամեստ էր «չափուել» նրա հետ...

- Ինձ համար գրեթէ ամէն ինչ հասկանալի է, սակայն անհասկանալի մնաց ձեր կողմից մրցոյթին խաչատուրեանին ներկայացնելու ձեւը, միջոցը, պարագան, ի՞նչ կ'ասէք այդ մասին, ի՞նչ ձեւով ներկայացրիք խաչատուրեանի հիմնը, մանաւանդ այնտեղ բառերի խնդիր կար:

- Մինչեւ մրցոյթի օրը միայն երկու օր կար: Մշակոյթի նախարարը, անսալով իմ խնդրանքին, ի պատիւ իրեն, կարողացաւ մէկ օրուայ ընթացքում Ռադիոյի ձայնա-

դարանից ինձ հասցնել տալ խաչատուրեանի հիմնի նուագախմբային ձայնագրութիւնը: Նոյն օրը իմ տրամադրութեան տակ դրեց Երեւանի Կենտրոն համալսարանի երգչախումբը վաղամեռիկ խմբավար Մարիկա Եղիզարեանը: Կանացի երգչախումբը իմ բնակարանում սովորեց հիմնը իմ կողմից փոփոխուած բառերով: Յաջորդ օրը Արա Գեորգեանի ձայնագրման ստուգիչում ձայնագրեցինք խաչատուրեանի հիմնը արդէն պատրաստի նուագախմբային ձայնագրութեան վրայ: Եւ միայն մրցոյթից հագիւ 10-15 րոպէ առաջ նախարարի անձնական վարորդը իմ տանից տարաւ հիմնի ձայնագրութիւնը:

- Այս ի՞նչ հերոսական գործ էք կատարել մատար... եւ այսքան տարի լուել էք:

- Իսկապէս հերոսական գործ էր: Ափսո՛ւ, որ նախարարի կողմից քաջալերանքի արժանացած մեր համընդհանուր նախաձեռնութիւնը յաջողութեամբ չպսակուեց: Ես այս մասին առաջին անգամ է, որ հանդէս եմ գալիս մամուլով, այն էլ ԱԻՐՈՐԱ միջազգային մրցոյթում արուած անտեղի, անիմաստ, արդէն վտանգաւոր դարձած յայտարարութեան պատճառով: Քիչ յետոյ կ'ասեմ թէ ինչու վտանգաւոր:

- Նշանակում է ձեզ հետեւողներ կային, նոյնիսկ մշակոյթի նախարարը:

- Այո՛, իհարկէ: Մինչեւ օրս էլ հարցնողներ կան, թէ ե՞րբ ենք վերադառնալու մեր իսկական հիմնին: Այժմ եկ շարունակենք խօսել Հայաստանի այսօրուայ հիմնի մասին: Թէ ինչու, ինչից ելնելով հանդիսավարը (անունը չեմ յիշում) օրուայ նպատակին, խորհուրդին անյարիր յայտարարութիւն արեց Հայաստանի ազգային օրհներգի հետ կապուած՝ դժուարանում եմ ասել: Ամէն դէպքում տպաւորութիւնս այն է, որ նա պատուէր էր կատարում, հակառակ պարագային նա ի՞նչ պէտք ունէր յայտարարելու թէ Յասմինի Պապեանը կը կատարի Հայաստանի հիմնի հեղինակ Բարսեղ Կանաչեանի «Օրօր» երգը: Ըստ որում բնաւ տեղը չէր «Օրօր» երգի, մանաւանդ նուագախմբային ոչ շատ յաջող նուագակցութեամբ: Հասկացողի համար դժուար չէր ըմբռնել, որ վերջին վայրկեանին էր որոշուած այդ երգը խցկել երեկոյի ծրագրում:

- Հենց դա, այդ յայտարարութիւնը, ի՞նչ դրա տեղն էր պարոն Անասեան: Առ այսօր երբեւէ նման տեղեկութիւն չի տրուել ժողովրդին, մանաւանդ, մենք գիտենք, որ մեր այսօրուայ հիմնը կապ չունի հայկական երաժշտութեան հետ եւ Միքայէլ Նալբանդեանի փոփոխուած բառերով է հրամցուել ժողովրդին:

- Այդ այդպէս է Չարուհի: Նախ, Բարսեղ Կանաչեանը չի յօրինել մեր՝ այսպէս կոչուած հիմնի երաժշտութիւնը: Դա նոտա առ նոտա, հնչիւն առ հնչիւն կրկնութիւնն է «Խտալացի աղջկայ երգը» մեղեդու, որը ուսու կոմպոզիտոր Ալէքսանդր Գլազունովը օգտագործել է իր «Ռայմոնդա» բալետում: Բալետն առաջին անգամ կատարուել է 1898 թուին, երբ Կանաչեանը ընդամենը 13 տարեկան էր: Կը նշանակի Կանաչեանը, ինչպէս եւ Գլազունովը, օգտուել են նոյն աղբիւրից, եւ, որ քիչ հաւանական է, Գլազունովն է յօրինել մեր այսօրուայ օրհներգի երաժշտութիւնը::

- Ա՛յ, ես այդ մասին չգիտէի..., հետաքրքիր է, ի՞նչպէս է ձեզ

յաջողուել չալտնաբերել այդ՝ չափագա

- ձիշդն ասած, ես չեմ յայտնաբերել: Հիմա կ'ասեմ: Տարիներ առաջ Հայաստանի Ազգային Հեռուստատեսութիւնը ինձ հրաւիրեց կենդանի ելոյթի՝ յայտնելու համար իմ կարծիքը մեր հիմնի մասին: Ես անաչառ կերպով ապացուցեցի մեր այսօրուայ հիմնի երաժշտութեան անհամատեղի լինելը մեր ազգային երաժշտութեան ակունքների հետ, դրան հակադրելով խաչատուրեանի՝ միանգամայն ազգային ակունքների ու հոգեւոր երաժշտութեան հնչերանգների վրայ հիւսուած խաչատուրեանի փառահեղ երաժշտութիւնը: Եւ այդ ամէնը ոչ միայն խօսքով, այլեւ, անհամեստաբար, դաշնամուրի վրայ կենդանի կատարմամբ: Եւ այդ հաղորդումից յետոյ էր որ, երբ ես արդէն Լոս Անջելէսում էի, կոմպոզիտոր ընկերներիցս մէկը, որի անունը չեմ կամենում յայտարարել, Երեւանից հեռաձայնեց եւ յայտնեց այդ մասին:

- Ա՛յ քեզ բան...: Ի՞նչպէս է, որ այսօրուայ հիմնը որդեգրելիս մասնագէտ-երաժիշտները չեն անդրադարձել, որ կոպիտ սխալ են թոյլ տալիս հրաժարուելով իրենց տարի հայ ժողովրդի երակներում ամրագրուած Արամ խաչատուրեանի երաժշտութիւնից: Իսկ դուք ճշտեցի՞ք իրականութիւնը:

- Այո՛, ի՞նչպէս է: Անմիջապէս անցայ համակարգչի առջեւ եւ Գլազունովի բալետի երաժշտութիւնը «տակնուվրայ» անելուց յետոյ, գտայ մեր հիմնի երաժշտութիւնը եւ՝ ապշեցի: ձիշդ եւ ճիշդ նոյն մեղեդին, նոյնիսկ տոնաչափիւն էր նոյնը: Հիմա, որ տուն գնաս՝ ինքը կարող ես համակարգչի վրայից լսել Գլազունովի բալետի երաժշտութեան մէջ եղող մեր հիմնը:

- Այնուամենայնիւ ինձ համար անհասկանալի է, թէ մեր իշխանութիւնները ի՞նչ պէտք ունէին վերցնելու Առաջին Հանրապետութեան շինծու, հնարովի հիմնը:

- Դէ՛, գիտես Չարա ջան, սիրելուքի մի հակայ գանգուած տարիներ շարունակ սրբօրէն պահել, պահպանել է միայն երկու տարի գոյութիւն ունեցած Անկախ Հայաստանի Հանրապետութեան հետ կապուած բաղադրատարբերը, այդ թւում եւ Նալբանդեանի «Թշուառ անտէր»-ը, որը միանգամայն իրաւացիօրէն փոխուել է «Ազատ, անկախ»-ի: Եւ իմ պայքարը տարիներ շարունակ եղել է վերականգնել մեր սրբացած արժէքները:

- Եթէ բառեր էինք փոխելու, փոխէինք խաչատուրեանի հիմնի՝ երկու բառեակի մէջ ընդամենը տասներեք բառ: Ըստ որում առաջին եւ երկրորդ բառեակներում միայն առաջին տողերը, իսկ կրկնեցում՝ երրորդ տողը:

- Ես, իհարկէ յիշում եմ այն ամէնը ինչ հիմա դուք ասացիք, բայց էլի ու էլի չեմ հասկանում մեր կոմպոզիտորների այս անհոգի վերաբերմունքը: Ի՞նչ խղճով են նրանք հանդուրժում այս անիրաւութիւնը, եւ, մանաւանդ՝ անարդարացի վերաբերմունքը հայ հանճարի՝ Արամ խաչատուրեանի հանդէպ:

- Աղջիկս, Չարուհի, այսօր աւելի քան երբեւէ, վտանգի տակ է մեր հիմնի ճակատագիրը: Աստուած չանի, որ Ռուսաստանի որեւէ օպերային թատրոն որոշի բեմադրել Գլազունովի «Ռայմոնդա» բալետը եւ կամ մի ուսու բանիմաց երաժիշտ տեղեկանայ, որ հայերի

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՐԵԱԿԱՆ ԸՆԴԴԵՄ-ՎԱՐԿԱԲԵԿԿԱՆ ԼԻԿԱՆ (ADL) «ԱՅՆ ԻՆՉ ՈՐ ՊԱՏԱՐԵՑԱԲ ՀԱՅԵՐՈՒՆ ԱՌԱՆՑ ՏԱՐԱԿՈՅՄԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»

ՅՈՎՍԷՓ ՄԵԼՔՈՆԵԱՆ


Ամերիկայի Միացեալ Նահանգներու ազդեցիկ հրէական կազմակերպութիւններէն «Ընդդէմ-վարկաբեկման Լիկա» (Anti-Defamation League - ADL) Ուրբաթ 13 Մայիս 2016 թուականին իր համացանցին վրայ հրատարակուած հաղորդագրութեան մէջ ի միջաջոց հետեւեալը կը հաստատէր.

«Յատակ ըլլանք: Այն ինչ որ Օսմանեան կայսրութեան մէջ պատահեցաւ սկսեալ 1915-էն, ցեղասպանութիւն էր: Այս ցեղասպանութիւնը սկսաւ, երբ իշխող կառավարութիւնը ձեռքարկեց ու սպաննեց հարիւրաւոր հայ մտաւորականներ: Անկէ ետք, հայ ընտանիքներ արմատահան եղան իրենց տուներէն եւ դէպի մահ դրկուեցան: Հայ ժողովուրդը ենթարկուեցաւ տեղա-հանութեան, առեւանգումի, սեփականագրկումի, տանջանքի, ջարդի եւ սովամահութեան: Ինչ որ պատահեցաւ հայ ժողովուրդին՝ առանց տարակոչի ցեղասպանութիւն է»:

Հրէական Լիկայի այս յայտարարութիւնը նշանակալից է մի քանի տեսակէտէն:

Արդարեւ, սոյն կազմակերպութիւնը տասնամեակէ մը ի վեր կը մերժէր իբրեւ ցեղասպանութիւն որակել Մեծ Եղեռնի դէպքերուն պատճառով 1.5 միլիոն հայերու ջարդը: Թէեւ սոյն կազմակերպութիւնը երբեք կասկածի տակ չէր առած Օսմանեան կայսրութեան կողմէ Հայ ժողովուրդի դէմ կատարուած սպանդը, այսուամենայնիւ կը մերժէր այս արարքը իբրեւ ցեղասպանութիւն ճանչնալու այդ պատճառով դէմ կը կենար Ամերիկեան Գոնզրէպի մէջ Հայոց Ցեղասպանութեան որեւէ որոշումի որդեգրումին: Այս մերժողական կեցուածքը պատճառեղած էր այս կազմակերպութեան եւ ամերիկահայ համայնքի միջեւ խիստ լարուածութեան յաւելումին: Թէեւ ամերիկեան հրեայ համայնքի պատկանող որոշ յայտնի դէմքեր եւ կազմակերպութիւններ իրենց ընդվզումը եւ բողոքը արտայայտած էին այս բացասական դիրքորոշումին նկատմամբ, «Ընդդէմ-վարկաբեկման Լիկա»-ի ղեկավարութիւնը եւ մասնաւորաբար այս կազմակերպութեան նախագահ Ապրահամ Ֆոքսմէն, անդրդուելի կը մնային իրենց դիրքերուն վրայ: Անոնք միշտ նոյն պատճառաբանութիւնը յառաջ կը քշէին, թէ ամերիկեան Գոնզրէպին մէջ հայկական բանաձեւի մը իրենց բերած մասնակցութիւնը եւ նպաստը կրնային «վտանգի ենթարկել թուրքիոյ հրեայ համայնքին ապահովութիւնը»:

Միաժամանակ յայտնի կը դառնար, որ «Ընդդէմ-վարկաբեկման Լիկա»-ի



ղեկավարութիւնը ամէն ջանք կը թափէր զօրավիզ կանգնելու թուրքիա-իսրայէլ քաղաքական զինակցութեան եւ յարաբերութիւններու զարգացումի եւ ամրապնդումի ջանքերուն ու այդ նպատակին առաջնորդուած արգելք կը հանդիսանար ամերիկեան Գոնզրէպին մէջ որեւէ նախաձեռնութեան, որ կրնար ապունայիք նկատուիլ երկկողմանի այդ շահերու ծաղկումին:

Ամերիկահայ կազմակերպութիւնները տարիներէ ի վեր աշխատանք կը տանէին եւ ճնշում կը բանեցնէին «լուպիական» լայն կարողութիւն ունեցող այս կարեւոր կազմակերպութեան հակահայ տրամադրութիւնները փոխելու:

Այս աշխատանքի առաջին քայլերէն մին հանդիսացաւ 14 Օգոստոս 2007 թուականին Մեհէշուսէց նահանգի հայաշատ Ուոթըրթաուն քաղաքի քաղաքապետական խորհուրդի միաձայն որոշումը իր կայքերը խզելու վերոյիշեալ կազմակերպութեան հետ: Ուոթըրթաունի քաղաքապետական խորհուրդի անդամ Մարիլին Փաթիթիոյ կողմէ ներկայացուած եւ նիստին կողմէ միաձայնութեամբ ընդունուած յայտարարարին մէջ կ'ըսուէր. «Քաղաքապետական խորհուրդը մտահոգ է այն հարցով, որ ADL-ը կը ժխտէ փաստերը Հայոց այն անաւոր ցեղասպանութեան, որ տեղի ունեցաւ 1915-էն 1923 եւ որուն ընթացքին նախածրագրուած կերպով սպաննուեցան մէկ ու կէս միլիոն հայեր: Քաղաքապետական խորհուրդը չի կրնար կայքերը շարունակել այսպիսի կազմակերպութեան մը հետ»: Մէհէշուսէց նահանգի հինգ քաղաքներու (Արլինկթըն, Լեկզինկթըն, Ուեսթփոլտ եւ ապա Նիւպլըրիփորթ եւ Պէլմոնթ) ղեկավար մարմինները կը հետեւէին այս որոշումին ու կը խզէին իրենց կայքերը ADL կազմակերպութեան եւ անոր հովանաւորած «Ատելութեան Տեղ Չկայ» (No place for Hate) կրթական ծրագրին հետ, որ բազմաթիւ ամերիկեան նահանգներու մէջ կարեւոր աշխատանք կը տանի

հակասեմական եւ այլ նախապաշարունակներու դէմ պայքար մղելու համար: Մէհէշուսէց նահանգին մէջ ծաւալող այս յարաբերութիւններու խզումը պատճառ կ'ըլլար, որ ADL-ի շրջանային եւ կենդրոնական թեւերուն միջեւ տարակարծութիւն մը ծագի եւ ապա կազմակերպչական ճեղք մը բացուի երկուքին միջեւ: Այսպիսի ներքին եւ կազմակերպչական տարակարծութիւններու պատասխանատու նկատուեցաւ Լիկայի ազդեցիկ նախագահ Ապրահամ Ֆոքսմէն եւ անոր գործուէնութեան ընթացքը խիստ քննադատութեան արժանացաւ շահագրգռեալ կողմերու կողմէ: Ապրահամ Ֆոքսմէն հանգստեան կոչուեցաւ Յուլիս 2015 թուականին ու փոխարինուեցաւ Ժոն Կրինպլաթով: Ահա «Ընդդէմ-վարկաբեկման Լիկա»-ի այս նոր ղեկավար

Ժոն Կրինպլաթի ստորագրութեամբ է որ լոյս տեսած է այս հաղորդագրութիւնը գոր «Պոսթըն Կլոպ» հեղինակաւոր օրաթերթի խմբագրութիւնը կ'ողջունէ իբրեւ «ցարդ հրատարակուած ամէնէն գորաւոր հաստատումը մարդկային իրաւունքներու պաշտպանութիւնը որդեգրած կազմակերպութեան մը կողմէ՝ ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը»: Տարակոյս չի կայ, թէ այս ողջունելի զարգացումը կրնայ դրական անդրադարձ մը ունենալ ամերիկեան քաղաքական կեանքի բեմադրութեան վրայ՝ Հայ Դատի աշխատանքներու յառաջիկայ ձեւակերպումի եւ ծրագրումի տեսակէտէն, որովհետեւ շնորհիւ ամերիկահայ կազմակերպութիւններու եւ անհատներու յարատեւ աշխատանքին եւ ջանքին կարեւոր խոչընդոտ մը եւս ի վերջոյ յաթհարուած է: Թէ այս զարգացումը ինչպէս կարելի պիտի ըլլայ արդիւնաւորել ամերիկեան կեանքին մէջ ազդեցիկ ու կարեւոր դերակատարներու մասնակցութեամբ եւ թիկունքային աջակցութեամբ Գոնզրէպին մէջ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւը իր յաջող աւարտին հասցնելու համար, կախեալ է այն համագործակցութենէն, որ հայկական կազմակերպութիւնները պիտի կարենան թէ ներքին եւ թէ արտաքին ճակատներու վրայ յաջողեցնել՝ Ներկայացուցիչներու Տան մէջ մեծամասնական ձայնով այդ բանաձեւի քուէարկութիւնը ապահովելու համար:

2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՏԵՂԵԿԱՏԻՈՒԹԻՒՆ ՍՓԻՌՔԱՅԱՅ ԴԻՍՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տեղեկացնում ենք, որ Սփիւրֆի համար առաջնային համարուող մասնագիտութիւնների գծով կադրերի պատրաստման նպատակով, սփիւրֆահայ դիմորդներին ՀՀ կառավարութեան կողմից 2016թ. Ապրիլի 15-ի 382-ն որոշման համաձայն ՀՀ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում/բակալարիատ/պետպատուէրի շրջանակներում յատկացուել են 70 տեղեր, որոնց բաշխումը կատարուելու է ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարի հրամանով ստեղծուող յանձնաժողովի կողմից, մրցութային կարգով, դիմորդների կողմից ներկայացուած փաստաթղթերի բնակարկման միջոցով: Անվճար տեղերի մրցութային կարգով են մասնակցել մանկավարժական, հայագիտական, մշակութային մասնագիտութիւնների համար դիմորդները: Պետական պատուէրի տեղերից բացի, նոյն կարգի համաձայն, սփիւրֆահայ դիմորդները հնարաւորութիւն ունեն ընդունուել նաեւ վնարովի համակարգ, այդ թում մեքսիկացիներ, մագիստրատուրա եւ ասպիրանտուրա:

Առկայու ուսցմամբ բակալարիատի /ՀՀ կառավարութեան 2016թ. Ապրիլի 15-ին 382-ն որոշման. Յաւելուած 1, 2016-2017 ուս. տարուայ պետութեան կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիւ փոխհատուցմամբ, անվճար/ ուսանելու համար դիմորդները փաստաթղթերը ներկայացնում են ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը ս.թ. Յուլիսի 7-ից մինչեւ ս.թ. Օգոստոսի 22-ը, բակալարիատի եւ մագիստրատուրայի կրթական ծրագրերով /առաջին կուրսում/ ուսանելու համար՝ ս.թ. Յուլիսի 7-ից մինչեւ ս.թ. Հոկտեմբերի 3-ը ներառեալ, հեռակալ բաժիններում ուսանելու համար՝ ս.թ. Յուլիսի 7-ից մինչեւ ս.թ. Հոկտեմբերի 11-ը ներառեալ, յետաւանական/ասպիրանտական/ ծրագրով ուսանելու համար՝ ս.թ. Յուլիսի 7-ից մինչեւ Դեկտեմբերի 15-ը ներառեալ, նախնական /արհեստագործական / եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններում ուսանելու համար՝ ս.թ. Յուլիսի 7-ից մինչեւ ս.թ. Սեպտեմբերի 15-ը ներառեալ, նախապատրաստական բաժանմունքում ուսանելու համար՝ ս.թ. Յուլիսի 7-ից մինչեւ ս.թ. Դեկտեմբերի 15-ը ներառեալ:

Հայոց լեզուի բարար տիրապետելու եւ կրթական ծրագրերին յարմարելու նպատակով սփիւրֆահայ դիմորդները ընդունուելու են բուհերի նախապատրաստական բաժանմունքում ուսուցման մէկ տարի ժամկետով: Հայոց լեզուից եւ մասնագիտական առարկաներից բարար գիտելիքների առկայութեան պարագայում, ինչը որոշում է գիտելիքների ստուգման արդիւնքներով, դիմորդներին հնարաւորութիւն կտրուի ուսումը սկսել առաջին կուրսից: Գիտելիքների ստուգումները ՀՀ ուսումնական հաստատութիւններում անցկացուում են ս.թ. Օգոստոսի 26-ից մինչեւ Սեպտեմբերի 8-ը ընկած ժամանակահատուածում:

ԻՍ ԵՐԿՐԻՆ ՆԵՐՍԵՍ ԲԱԼԱՅԵԱՆ	
Դու կտրել ես երկար, երկար ճանապարհ,	Դու կտրել ես դարերի ճամբան Ու կերտել հրաշք Սարդարապատ
Դու եկել ես դարերի խորքից,	Հասել ես, տիրացել փառքին, երկիր իմ յաւերժ անպարտ...
Դու սնուել ես կաթով անապական,	Երգում եմ փառքը հրաշագեղ Դու ծաղկած արեւոտ այգեստան,
Դու սարեր ես պեղել հիմքից:	Կ'ապրես անյաղթ լեռներիդ պէս, Հերոսներ ծնող Հայաստան...
Նահատակուել ես յանուն Արդարութեան ու խղճի	
Դրանով յաւերժացել ես կրկին, Նուաճել գագաթը վերջին:	

ԻՆՉՊԵՍ 3ԱՂԹԱՅԱՐԵԼ ԲԱՐԴՈՅԹՆԵՐԸ՝ 6 ԱՐԴԻԻՆԱԻՏ ՏԱՐԲԵՐԱԿ

Հոգեբանութիւնը մեզի կը պատմէ զիտակցութեամբ եւ անգիտակցութեամբ փոփոխութեամբ կարծրատիպերու, զգացումներու, միտքերու մասին, որոնք հիմնուած են մեր յիշողութիւններուն, փորձին վրայ եւ որոնք մեր մէջ ձեւաւորած են վարքի եւ զգացումներու որոշ կազմակերպումներ: Այս ամէնը հասարակութեան մէջ կ'անուանեն բարդոյթներ, որոնք, ինչպէս կը համարուի, կը խանգարեն մարդոց ապրիլ կամ որեւէ բան ուզել: Հոգեբանները համոզուած են, որ պէտք է սորվիլ ապրիլ, այդ ատեն բարդոյթներու հարցը կը փակուի ինքն իրեն:

Պէտք է հրաշքի ապաստան, պէտք է սկսիլ աշխատիլ կեանքի վրայ ինքնուրոյն: Փորձեցէք նայիլ բարդոյթներուն այլ տեսանկիւնէ: Բարդոյթը իրավիճակ է, որուն մարդը ինք կը հասնի: Այդ իրավիճակին հիմք կրնան ըլլալ վախը, նախանձը, նմանակումը՝ դեռ փոքր տարիքէն: Մտորումներ կարելու գործն են փոքրիկի գիտակցութեան ձեւաւորման մէջ: Այն, թէ փոքրիկը ինչպէս կ'ընկալէ իր մայրիկը, հիմք կը դնէ անոր յարաբերութիւններու ձեւաւորման բոլոր կիներու հետ, որոնց ան պիտի հանդիպի իր կեանքին մէջ: Բացի այդ՝ ատրիկա պիտի ազդէ նաեւ այն բանին վրայ, թէ ինչպիսին պիտի ըլլայ անոր տունը, ապրելու վայրը, աշխատանքը: Հօր ընկալումը հիմք կը դառնայ կեանքին մէջ հանդիպած տղամարդոց հետ յարաբերութիւններուն մէջ: Սակայն այս ամէնը կարելի է փոխել:

Ոչ մէկ պայման. Պէտք է պայմաններ դնել ոչ դուք ձեռք, ոչ կեանքին, ոչ այլ մարդոց վրայ: Կարելու է ընդունիլ եւ յարգել դուք ձեզ՝ ձեր կեանքին մէջ գտնուող մարդոց ընտրութեան եւ տեղի ունեցող իրադարձութիւններուն համար: Փորձեցէք համկնալ, որ ձեր կեանքը յօրինուած եւ ստեղծուած է ձեր կողմէ:

Ընդունեցէք դուք ձեզ. Դուք այնպիսին էք, ինչպիսին կաք:

Եթէ դուք ձեզ նուաասացուցած էք, ձեզ միանգամայն պիտի նուաստացնեն խանութին, փողոցին, հանրակառքին մէջ: Ուրիշին վրայ նեղանալը, նոյնպէս կը նշանակէ դուք ձեր վրայ նեղանալ: Միծաղիլ ուրիշի վրայ՝ ծիծաղիլ ձեր վրայ: Ատել ունէ մէկը՝ ատել դուք ձեզ: Ոչ մէկը կրնայ ձեզի անախորժու-

թիւններ պատճառել առանց ձեր արտօնութեան: Նոյն կերպով դուք չէք կրնար ատրիկա ընել ուրիշին հետ՝ առանց անոնց ներքին արտօնութեան:

Դուք ունիք ամէն անհրաժեշտ բան. ինչո՞ւ մենք չենք գնահատեր այն, ինչ ունինք: Մենք ունինք տուն, աշխատանք, մտերմներ, կարելիութիւններ: Ինչո՞ւ պէտք է կորսնցնել ոտքերը, որպէսզի հասկնալ, որ կարելի է վագել: Եւ ընդհանրապէս՝ ինչո՞ւ պէտք է կորսնցնել որեւէ բան, որպէսզի սկսիլ գնահատել զայն: Սորվելով գնահատել այն, որ մենք ունինք, պէտք է ըլլար զայն կորսնցնելու:

Անկեղծ եղէք դուք ձեզ հետ. երջանկութիւնը անկեղծութիւն է: Պէտք է դերեր խաղալ, դիմակներ կրել: Նախանձը անգիտութիւն է, նմանակումը՝ ինքնապաշտութիւն: Եղէք դուք ձեզ հետ: Խոստովանեցէք՝ ես 40, 50, 60 տարեկան եմ, եւ այդ ես եմ: Օգնեցէք, օգնեցէք առանց պայմաններու, ուղղակի, որովհետեւ դուք ունիք այդպիսի պահանջ ձեր մէջ, այլ ոչ թէ որեւէ բան ստանալու ակնկալիք: Հակառակ պարագային՝ աւելին կը կորսնցնէք:

Հասկցէք դուք ձեզ եւ ձեր ճաշակը. Հարցուցէք դուք ձեզ՝ ո՞վ էք դուք, ի՞նչ կը սիրէք: Ո՞րն է ձեր սիրած ուտելիքը: Եւ կարելու, պատասխանեցէք՝ այն, որ դուք կ'անուանէք սիրելի, իրօք ձեր ճաշակն է, թէ՞ ծնողներու, ընկերներու, հասարակութեան կողմէ պարտադրուածը: Ո՞վ է այն մարդը, որ հայելիին մէջէն ձեզի կը նայի, ով կ'աշխատի օրական 24 ժամ: Արդե՞սք ան ձեր սիրոյ, ուշադրութեան եւ գովասանքի նուաճումն է:

Որեւէ բանի համեմու համար, պէտք է անոր ժամանակ տրամադրել. կեանքի մէջ ամէն ինչ պէտք է դիւրին տրուի, սակայն ստոր համար պէտք է ժամանակ: Օրինակ, ես ունիմ ձիգ որովայն, սակայն, եթէ ձեզի ցոյց տամ վարժութիւնը, ձեր որովայնը վաղը այդպիսին չի դառնար: Դուք պէտք է ընէք այդ վարժութիւնը: Պէտք է մոռնալ ծուլութեան մասին, սիրել դուք ձեր մասին մտածելը եւ սորվեցնել ձեր մարմինը ըլլալ զեղեցիկ: Նաեւ ժամանակ պէտք է դուք ձեզ ընդունելու համար:

Յիշեցէք, որ բարդոյթներ չկան: Այն ամէնը, որ մեզ կը տարբերէ ուրիշներէն, մեր եզակիութիւնն է:

ՔՈՒՆԸ՝ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ

Իւրաքանչիւր կին գիտէ, որ բաւական է անցնել անքուն գիշեր մը եւ դէմքը կ'երկարի, աչքերուն տակ կը յայտնուին կապոց տըջաններ, աչքերը խամրած են, կնճիռները աւելի տեսանելի:

Գիտնականները, որոնք կը հետազոտեն քունի ազդեցութիւնը մարդու առողջութեան վրայ, մշակած են տասը հասարակ կանոն, որոնց պէտք է հետեւի իւրաքանչիւր կին, որ կ'ուզէ գեղեցիկ ըլլալ:

Ամենալաւ կարելի է հանգստանալ գիշերը. Գիշերը բնութիւնը կը դանդաղեցնէ իր կեանքի շարժը, այդ պատճառով մարմինն համար ամենալաւ հանգիստը գիշերն է: Այդ ընթացքին այնտեղ կը ծնին նոր հիւսկիները եւ տեղի կ'ունենայ վնասակար նիւթերու արտանետում:

Միջինը՝ 8 ժամ. Մեծահասակ մարդու մարմինը միջին հաշուով պէտք կ'ունենայ 8-ժամեայ հանգիստի: Այդ 8 ժամերուն ընթացքին քունը պէտք է ըլլայ անխափան, քանի որ իրական հանգիստը կը սկսի քնանալէն քանի մը ժամ անց:

Թեթեւացում քունէն առաջ. Քնանալէն առաջ փորձեցէք ազատիլ հոգեբէն, մտածումներէն, մի կարգաք յուզիչ գիրքեր եւ մի նայիք նոյնպիսի ֆիլմեր, սովորաբար ատրիկա կը ծանրաբեռնէ ենթագիտակցութիւնը եւ կը նպաստէ վատ երազներ տեսնելուն:

Քիչ ջերմութիւն քնանալէն առաջ. Երեկոյեան պէտք է խուսափիլ շատ ուտելէն: Քունի ժամանակ մարմինը քիչ ուժ կը վատնէ, այդ պատճառով սնուցող նիւթերը չեն տանի մկաններու վերականգման, այլ կը դառնան աւելորդ

ճարպային կուտակումներ: Նիւթափոխանակութիւնը կը տանի արեան հոսքի դէպի որովայն, եւ ստամոքսը կ'աշխատի՝ խանգարելով ջրային համակարգը: Խորհուրդ կը տրուի ընթերել քնանալէն քանի մը ժամ առաջ եւ ընդունիլ թեթեւ սնունդ կամ, օրինակ, խմել թարմ կաթ:

Ամբողջական խաւարում. Քնացէք միութեան մէջ: Յանկալի է, որ ննջասեղանակին պատերը բաց գոյն չըլլան: Կատարեալ ջերմաստիճան. Ննջասեղանակին մէջ կատարեալ ջերմաստիճանը մոտաւորապէս 20 աստիճանն է: Անկէ ցած կամ բարձր ջերմաստիճանը կը դառնայ անհանգիստ քունի պատճառ:

Բաւական թարմ օդ. Լաւ օդափոխուած սենեակին մէջ մարդը կ'ունենայ աւելի առողջ քուն: Այդ պատճառով լաւ եղանակին քնացէք բաց պատուհաններով, իսկ վատ եղանակին՝ լաւ օդափոխեցէք սենեակը:

Քնացէք ուղիղ անկողնի վրայ. Անկողնի պէտք է ուղիղ ըլլայ: Բարձր բարձրը եւ չափազանց փափուկ ներքնակները կը յանգեցնեն ողնայարի ծոման, որ մարմինն կը խանգարէ թուլնալ:

Քնաբեր՝ միայն ծայրայեղ պարագային. Քնաբերի պարբերական ընդունումը ժամանակի ընթացքին վատ կ'անդրադառնայ ջրային համակարգին վրայ: Քնաբեր ընդունող մարդը հագուադէպ առօրյ կ'արթննայ:

Եւ... սիրած տղամարդը. Գիտնականները ապացուցած են, որ սիրահարուած կինը աւելի առողջ քուն կ'ունենայ:

ԶՕՐԱԻՈՐ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՆՈՋ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մի սպասեր. Գործէ. Իւրաքանչիւր, նոյնիսկ աննշան քաջ դէպի առջեւ աւելի արդիւնաւէտ է, քան անիմաստ սպասումները: Հարցազրոյցէն ետք չե՞ն հեռաձայներ: Դուն հեռաձայնէ եւ գիտցիր, թէ երբ որոշում պիտի կայացնեն: Ընկերդ չի՞ կրնար որոշել շաբաթավերջին ինչով զբաղիլ: Դուն ծրագրաւորէ քու հանգիստդ, իրմէ անկախ: Երկար ժամանակ է չե՞ս կրնար պաշտօնի բարձրացում ստանալ: Այլ ընկերութիւններ գիտարկէ: Աւելի լաւ է բազմաթիւ տարբերակներ փորձել եւ չստանալ ցանկալին, քան ընդհանրապէս ոչինչ ընել: Ոչ ոք քեզի համար աւելին կ'ընէ, քան՝ դուն:

Մի մտածեր, թէ քեզ ինչպէս կը գնահատեն: Դուն գնահատէ.

Մեծ հաճոյք չէ՞ սրճարանի մէջ նստիլ ժամադրութեան եւ հարց տալ. «Ես անոր համար հաճելի՞ եմ»: Դուն հաւանաբար նկատած ես, որ տղամարդիկ չաճախ չեն դիտարկեր այն հնարաւորութիւնը, որ իրենք կրնան հաճելի չթուիլ: Այնպէս որ, լիցքաթափուիր, յենիր աթոռի թիկնակին եւ գնահատէ քեզ սիրողը բոլոր չափանիշներով: Միաժամանակ պիտի որոշես՝ ան քեզի համար հետաքրքրաւոր է, թէ՞ ոչ:

Յանկալին իրականութեան տեղ մի անցնէր. Պատկերացուր, թէ որքան ժամանակ կարելի է իննջել, եթէ գայն չծախսես տղամարդու համակարգի ազդանշանները վերածանելու վրայ:

Ինչ է տարբերութիւն, թէ ան ինչպէս նայած է, եթէ մինչեւ հիմա չէ հեռաձայնած եւ չէ առաջարկած հանդիպիլ: Ամենալաւ տրամադր-

ուածութիւնը հանգիստ լաւատեսութիւնն է եւ տրամադրութեան ցատկերու բացակայութիւնը ունէ մէկուն հեռաձայնին կամ անոր բացակայութեան պատճառով:

Փորձէ բարձրացնել տրամադրութիւնդ. Թոյլ մի տար նեղանալ անոր համար, որ վերադասը դիտողութիւն ըրած է ուշացման համար, կամ ընկերուհիդ քննադատած է նոր սանտրուածքդ:

Այլ մարդիկ պէտք է բացասաբար ազդեն յուզական վիճակիդ վրայ եւ խարխիլեն ինքնագնահատականը: Տրամադրութիւնդ բարձր պահելու համար մտքիդ մէջ պահէ քեզ ուրախացնող բաներուն ծանրակշիռ ցուցակը, տաք լոգանք գիրքով, գաւաթ մը սուրճ օշարակով, այցելութիւն լողաւզան կամ երունդներու յարգարում: Անյաջողութիւնները հաճոյքով փոխհատուցէ:

Մի գոհաբերեր դուն քեզ. Քեզի հանդէպ սէրը կեանքիդ մէջ իւրաքանչիւր յարաբերութեան առաջին աստիճանն է: Մի սպասեր, թէ ուրիշները քեզ աւելի շատ պիտի սիրեն, քան դուն քեզ:

Մարդու կեանքի մէջ ամենաարժեքաւոր յարաբերութիւնները ինքն իր հետ յարաբերութիւններն են: Կարելու է եւ այն, թէ ինչ կը մտածես դուն քու մասիդ: Կարելի չէ առաւօտեան յուզական առումով յարմարաւէտ գալ, եթէ անցեալ երեկոյեան մինչեւ ուշ ժամ նստած ես աշխատասենեակիդ մէջ՝ ուրիշին աշխատանքը ընելով: Երբ չես ուզեր որեւէ բան ընել, քաղաքավար կերպով մերժէ ան պիտի զգաս, թէ ինչ կը նշանակէ «ուտերէն լեռ ինկալը» եւ «հոգիին մէջ թեթեւութիւնը»:

ՃԻՇԴ ՈՒՏԵԼԻՔԸ 30 ՏԱՐԵԿԱՆԸ ԱՆՑԱԾ ԿԻՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ

Տարիքի ընթացքին, ցաւօք, կը փոխուի ոչ միայն հայեացքը կեանքին, այլ նաեւ նիւթափոխանակութիւնը: Այդ պատճառով, եթէ դուք թարմ էք եւ համոզուած ձեր անկրկնելիութեան մէջ, անցնելով նոր տարիքային փուլ, միեւնոյնն է, պէտք է որոշ փոփոխութիւններ մտցնէք ձեր անդակարգին մէջ, այնպէս, որ կարենաք ձեր մարմինն մէջ ապահովել անհրաժեշտ մասնիկները եւ կենսամիջոցները:

Առաջին հերթին 30 տարեկանը անց կիներ պէտք է ուշադրութիւն դարձնէ այն ուտելիքներուն վրայ, որոնց մէջ քալիում կայ: Ատրիկա կաթնամթերքն է, կանաչեղէնք: Պէտք է նաեւ յիշել վիթամին D-ի մասին եւ ամէն օր օգտագործել հաւկիթի դեղնուց:

Կենսունակութեան պահպանման համար շատ կարելու է եողը: Այդ պատճառով պէտք է օգտագործել

ընկուզեղէն եւ ծովի կաղամբ: Եողը կ'ազատէ ձեզ շուտ յոգնելէն, կը պաշտպանէ ատամները եւ մազերը:

Երեսուէն յետոյ, կիներ պէտք է հրաժարին խիստ անդականոններէն եւ յաճախ ուտելիք պատրաստելէն: Առաջինը կը հիւծէ մարմինը, իսկ այդ տարիքին վերականգնումը տեղի կ'ունենայ դանդաղ եւ կարելի է լուրջ վնաս հասցնէ մարմինին: Իսկ յաճախ պատրաստելը կ'ազդէ հոգեբանօրէն եւ կրնայ տանիլ սնունդի շարաշահման:

Ամէնօրեայ անդակարգին մէջ պարտադիր պէտք է ըլլան մակնիգիւղը, որ կ'ազատէ ճնշախտէն եւ կը բարելաւէ յիշողութիւնը: Անիկա կարելի է ստանալ հնդկաձաւարի եւ վարսակի փաթիլներու միջոցով:

Մամիկներու եւ կենսամիջոցներիւրու իւրացման կը խանգարեն սուրճը, ալբոլը եւ հակակենսամիջոցները: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

«ԱԼԱՇԿԵՐՏՆ» ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆՈՒԱԾԵՑ ԴԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆԻ ՏԻՏՂՈՍԸ

Երեւանի «Ալաշկերտը» պատմութեան մէջ առաջին անգամ նուաճեց ֆուտպոլի Հայաստանի ախոյեանի տիտղոսը: Հայաստանի առաջնութեան վերջին խաղում Աբրահամ խաչմանեանի գլխաւորած թիմը հիւրընկալուեց «Միկային» եւ առաւելութեան հասաւ 2:0 հաշուով: Յաղթանակի սկիզբը դրեց Վահան Յովհաննիսեանը, իսկ 69-րդ րոպէին վերջին յոյսի խախտման համար հեռացուեց «Միկային» դարպասապահ Արսէն Բեգլարեանը: Նշանակուեց 11 մեթրանոց հարուած, որը դիպուկ իրացրեց Արաուիտին: «Ալաշկերտն» առաջնութիւնն աւարտեց 55 միաւորով:



Գիւմրիի «Շիրակը» 2:1 հաշուով պարտութեան մատնեց «Արարատին» եւ 52 միաւորով գրաւեց երկրորդ տեղը: Պրոնգէ մետալակիր դարձաւ «Փիւնիկը», որի պայմանական մրցակիցը լուծարուած «Ուլիսն» էր, եւ Սարգիս Յովսէփեանի գլխաւորած թիմը մրցաշարն աւարտեց 48 միաւորով: «Շիրակն» ու «Փիւնիկը» կը մասնակցեն Եւրոպայի լիգայի որակաւորման փուլին:

Յաջորդ տեղերում են «Գանձաար-Կապանը», «Արարատը», «Միկան» ու «Բանանցը»:

2011թ. Դեկտեմբերին ստեղծուած «Ալաշկերտը» Հայաստանի Բարձրագոյն խմբում առաջին անգամ հանդէս է եկել 2013-ին՝ գրաւելով վերջին տեղը: Անցած առաջնութիւնում թիմն արդէն չորրորդ տեղում էր՝ նուաճելով Եւրոպայի լիգայի որակաւորման փուլի ուղեգիր: Այս տարի «Ալաշկերտը» ախոյեանի կոչման հետ նուաճեց նաեւ Ախոյեանների լիգայի որակաւորմանը մասնակցելու իրաւունք:

ԱՐՄԱՆ ԵՐԵՄԵԱՆԸ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ՓՈՒՍԱՆՈՅԵԱՆ

Արման Երեմեանը նուաճել է փոխ-ախոյեանի տիտղոսը Շուէյցարիայի Մոնտրիո քաղաքում ընթացող թեքուանտոյի Եւրոպայի առաջնութիւնում: 87 կգ քաշայինների եզրափակիչում Հայաստանի ներկայացուցիչը պարտուել է ռուսաստանցի Վլադիսլաւ Լարինին:



Հայաստանի ներկայացուցիչներին Եւրոպայի առաջնութիւնում մետալ էր նուաճել նաեւ Սերգէյ Վարդապարեանը՝ 68 կգ քաշային կարգում գրաւելով երրորդ տեղը:

ՌԻՕ-2016. ԱՄԱԼԻԱ ՇԱՌՅԵԱՆԸ ԿԱՏԱՐԵԼ Է ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻԸ

Հայաստանի ներկայացուցիչ Ամալիա Շառոյեանը Ալբանիայում մասնակցել է աթլետիկայի օլիմպիական վարկանիշային մրցաշարին:



Նա հանդէս է եկել հեռացատկում եւ կատարել է 2016թ. Ռիոյի Օլիմպիական խաղերի վարկանիշային նորմատիւրը: Շառոյեանը նուաճել է նաեւ յաղթողի կոչումը:

Նա ցոյց է տուել 6.72 մ արդիւնք, ինչը 2 սմ-ով գերազանցում է օլիմպիական նորմատիւրը:

ԵՈՒՐԱ ՄՈՎԱԽՍԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ «ՌԵԱԼ ՍՈԼՈ ԼԵՅՔՈՒՄ»

MLS-ը հրապարակուել է լիգայի ֆուտպոլիստների աշխատավարձերը:

Ամերիկեան «Ռեալ Սոլթ Լէյքը» յարձակուող եուրա Մովսիսեանի տարեկան աշխատավարձը կազմում է 200 հազար տոլար: Հայաստանի հաւաքակազմի թեկնածուի տրանսֆեային իրաւունքը պատկանում է Մոսկուայի «Սպարտակին», որում նա ստանում էր տարեկան մօտ 3 միլիոն եւրօ աշխատավարձ:

MLS-ի ամենաբարձր վարձատրուող ֆուտպոլիստն «Օռլանդոյի» պրագիւրացի կիսապաշտպան Կական է, որի տարեկան աշխատավարձը կազմում է 7.167 միլիոն տոլար:

MLS-ի ամենաբարձր վարձատրուող ֆուտպոլիստները

1. Կակա («Օռլանդօ Սիթի») - տարեկան 6,34 միլիոն եւրօ աշխատավարձ
2. Սեբաստիան Ջովինկօ («Տորոնտօ») - 6,29 միլիոն
3. Մայքլ Բրեդլի («Տորոնտօ») - 5,75 միլիոն
4. Ստիւեն Ջերարդ («Լոս Անճելոս Գեյթս») - 5,42 միլիոն
5. Ֆրենկ Լեմպարդ («Նիւ Եորք Սիթի») - 5,3 միլիոն

«ԲԱԲԱՐԻԱՆ» ՅԵՏԻԱՂԵԱՅ 11 ՄԵՏՐԱՆՈՑՆԵՐՈՎ ՆՈՒԱԾԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԳԱԲԱԹԸ

Միւնխենի «Բաւարիան» ռեկորդային 18-րդ անգամ հռչակուեց ֆուտպոլի Գերմանիայի գաւաթակիր:

Գերմանիայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում միւնխենցիները յետխաղեայ 11 մեթրանոցներով յաղթեցին Դորմունդի «Բորուսիային», որը մրցաշրջանն աւարտեց առանց տիտղոսի:

Պեւլինում կայացած խաղի առաջին խաղակէսն անցաւ հաւասար պայքարում եւ աւարտուեց 0:0 հաշուով: Մինչեւ ընդմիջում թիմերը չունեցան իրական գոլային պահեր, իսկ երկրորդ խաղակէսում աւելի վտանգաւոր էին գործում մրցակցի դարպասի մօտ: «Բաւարիան» ունէր տարածքային առաւելութիւն, իսկ «Բորուսիան» երբեմն-երբեմն անցկացնում էր վտանգաւոր հակադրոհներ: Միւնխենցիներն աստիճանաբար մեծացրին ճնշումը, բայց, ստեղծելով կոլային պահեր, կոլ խփել չյաջողուեց: Վերջնամասում դորմունդցիները հաւասարեցրին խաղը եւ սկսեցին աւելի յաճախ գրոհել: 85-րդ րոպէին «Բորուսիան» կարող էր բացել հաշիւը, բայց զբաղուեց յարձակուող Պիեր-Էմերիկ Օբամեանգը վրիպեց դարպասի առջեւից: Հիմնական ժամանակն այդպէս էլ աւարտուեց, իսկ աւելացուած 30 րոպէներին կոլեր չգրանցուեցին:

Յետխաղեայ 11 մեթրանոցների հարուածաշարի ժամանակ «Բորուսիայից» դիպուկ էին Սինձի Կագավան, Պյեր-Էմերիկ Օբամեանգը եւ Մարկօ Ռոյսը, իսկ Սվեն Բենդերը եւ Սոկրատիս Պապաստատոպոլուսը վրիպեցին: «Բաւարիայից» դարպասը գրաւեցին Արտուրօ Վիդալը, Ռոբերտ Լեւանդովսկին, Թոմաս Միւլերն ու Դուգլաս Կոստան, իսկ Ջոշուա Կիմիխի հարուածն անյաջող էր:

Հայաստանի հաւաքակազմի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Բորուսիայի» մեկնարկային կազմում խաղաց առանց փոխարինման եւ լաւագոյններից էր խաղադաշտում:

«ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԵՂՆ»՝ ԱՆԳԼԻԱՅԻ ԳԱԲԱԹԱԿԻՐ

«Մանչեսթեր Եունայթէդը» պատմութեան մէջ 12-րդ անգամ դարձաւ ֆուտպոլի Անգլիայի գաւաթակիր:



Լոնտոնի «Ուեմբլի» ստադիոնում կայացած եզրափակիչում Անգլիայի 20-ակի ախոյեանը լրացուցիչ ժամանակում 2:1 հաշուով կամային յաղթանակ տարաւ «Քրիսթալ Փելասի» նկատմամբ: Հիմնական ժամանակն աւարտուեց 1:1 հաշուով: Աւելացուած ժամանակում Լուի վան Գալի թիմը 10 խաղացողներով մնաց անգլիացի պաշտպան Քրիս Սմոլինգի հեռացման պատճառով, սակայն դա չխանգարեց յաղթանակ կորզել: 110-րդ րոպէին մանչեսթերցիներին յաղթանակ պարգեւեց փոխարինման դուբա եկած Ջէյսի Լինգարդը:

«Մանչեսթեր Եունայթէդը» Անգլիայի Գաւաթում նախորդ անգամ յաղթել էր 2003/04թթ. մրցաշրջանում: Այս տարի Անգլիայի գաւաթակրի տիտղոսը չպաշտպանեց «Արսենալը»:

«ԵՈՒՎԵՆՏՈՒՍԸ» «ՄԻԼԱՆԻՆ» ՅԱՂԹԵՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ ԵՒ ԴԱՐՁԱՒ ԻՏԱԼԻԱՅԻ ԳԱԲԱԹԱԿԻՐ

Ֆուտպոլի Իտալիայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում Թուրինի «Եուվենտուսը» լրացուցիչ ժամանակում նուազագոյն հաշուով յաղթեց «Միլանին»: Հռոմի «Օլիմպիկո» ստադիոնում կայացած խաղի հիմնական ժամանակն աւարտուեց 0:0 հաշուով, իսկ թուրինցիների յաղթական կոլը 110-րդ րոպէին խփեց իսպանացի յարձակուող Ալվարօ Մորատան:

«Եուվենտուսը» պաշտպանեց տիտղոսը եւ ռեկորդային՝ 11-րդ անգամ դարձաւ Իտալիայի գաւաթակիր:

ԴՈՐՏՄՈՒՆԴԻ «ԲՈՐՈՒՍԻԱՆ» ՄՏԱԴԻՐ ԶԵ ՎԱՃԱՌԵԼ ԴՆՆԻԻՆ ՄԻՒԹԱՐԵԱՆԻՆ

Դորմունդի «Բորուսիան» չի պատրաստուում վաճառել Հայաստանի հաւաքակազմի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանին: Այդ մասին յայտարարել է գերմանական ակումբի գործադիր տնօրէն Հանս-Յոնաս Կլեմ:

«Արդէն ասել եմ, որ յաջորդ մրցաշրջանում մենք ոչ մի դէպքում չենք կոցնելու 3 խաղացողների: «Բորուսիայի» հետ Մխիթարեանի պայմանագիրն աւարտուում է 2017-ին, ինչը դառնում է շուկայի պատճառ: Սակայն մենք յոյս ունենք, որ նա կը ցանկանայ երկարաձգել ակումբի հետ պայմանագիրը», - վացկէի խօսքը մէջբերում է Sport1.de-ը:

Աւելի վաղ գերմանական մամուլում լուրեր էին շրջանառուում, որ «Բորուսիան» պատրաստ է 60 միլիոն եւրոյով վաճառել 27-ամեայ ֆուտպոլիստին: Մխիթարեանի ծառայութիւններով հետաքրքրուած են Լոնտոնի «Չելսին», «Արսենալը» եւ Թուրինի «Եուվենտուսը»:

Գերմանիայի աւարտուած առաջնութիւնում Հենրիխը մասնակցել է 31 խաղի եւ դարձել 11 գոլի ու 18 կոլային փոխանցման հեղինակ:

ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ **Մարտ 21-Ապրիլ 19**
 Ձաւակներդ մէկը շատ մեղ կացութեան մը մէջ պիտի ձգէ քեզ, որ դուն բնաւ պատրաստ չէիր այդպիսի պարագայի մը: Առանձնութիւնը երբեք չսիրելուդ՝ յաճախ հաւաքոյթներ կը ծրագրես: Առանց ունէ կասկածի հետեւէ սրտիդ զգացումներուն: Բախտաւոր թիւերդ են: 19,21,26,30,33

ՅՈՒԼ **Ապրիլ 20-Մայիս 20**
 Պիտի պատահի որ երբեմն պիտի չկարողանաս հասկնալ շուրջի անցուդարձերը, սակայն միշտ պետք է յիշես թէ ամէն բան պատճառի մը համար կ'ըլլայ: Դժուար մրցումի մը պիտի մասնակցիս եւ շատ յաջող դուրս պիտի գաս անկէ: Բախտաւոր թիւերդ են: 2,6,18,19,22

ԵՐԿՈՒՐԵԱԿ **Մայիս 21-Յունիս 20**
 Գործիդ հետ զուգահեռ՝ ունիս մեծ ծրագիր մը, որը շատ լաւ շահեր պիտի հայթայթէ քեզի: Մէկէ մը կախեալ չես եւ երբեք օգնութիւն չես խնդրեր: Իսկական երջանկութեանդ գաղտնիքը ընտանիքիդ անդամներուն հետ սիրով ըլլալդ է: Բախտաւոր թիւերդ են: 11,14,25,30,35

ԽԵՑԳԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
 Հակառակ անոր որ կը ջանաս ապրիլ կողակիցդ հաճեցնող կեանք մը, կ'անդրադառնաս թէ յաճախ արգելքներու կը հանդիպիս եւ կը տկարանաս: Հիւրասէր ես եւ ազնիւ հոգի մը ունիս, մի գիջիդ սկզբունքներուդ: Բախտաւոր թիւերդ են: 6,9,11,25,30

ԱՌԻԺ **Յուլիս 23-Օգոստոս 22**
 Գործ մը յաջողցնելու համար միայն քու անձնական ոյժիդ վստահէ: Այս շաբաթ պիտի ազդուիս կարգ մը խօսակցութիւններէ, յատկապէս ազգականի մը կողմէ քեզի հասած լուրէն: Կարծ պտոյտ մը շատ հաւանական է շաբաթավերջին: Բախտաւոր թիւերդ են: 1,18,25,26,33

ԿՈՅՍ **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
 Երբ ձեռք ձգած միւսական միջոցներդ պակսին, յուսախաբութեան կը մատնուիս: Դուն քեզ մի յուսալքեր՝ քաջալերուէ որ առողջ ես: Իմաստութեամբ վարուէ ընտանիքիդ անդամներուն հետ: Շատ ուրախ առիթի մը մերկայ պիտի գտնուիս: Բախտաւոր թիւերդ են: 5,17,22,31,35

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
 Հակառակ մտահոգութիւններուդ՝ միշտ լաւատես ես եւ ինքզինքդ կը պարտադրես ուրախ ըլլալու: Սորվելու փափաքդ շատ զօրաւոր ըլլալուն՝ յաճախ նորութիւններ կը փնտռես: Մի ձգեր որ օգտագործեն քեզ, գիտցիր իրաւունքներդ: Բախտաւոր թիւերդ են: 7,9,15,29,31

ԿԱՐԻՃ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
 Յաճախ սէր եւ ազնուութիւն կը ցուցաբերես շուրջիներուդ, եւ փոխարէնը յարգանք կը սպասես: Գալիք օրերուն շատ հիւրասիրութիւններ պետք պիտի ունենաս ընելու: Գործիդ մէջի դիրքդ կրնայ բարձրանալ եւ յաւելում կրնաս ստանալ: Բախտաւոր թիւերդ են: 1,14,18,25,26

ԱՂԵՂՆԱԲՈՐ **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
 Սէրդ եւ երախտագիտութիւնդ աւելի բացայայտօրէն պետք է ցուցաբերես կողակիցիդ՝ եթէ կուզես համերաշխ կեանք մը ունենալ: Բարի գործեր ընելէ մի դադրիր: Ուրախ եղիր որպէսզի աւելի առողջ ըլլաս եւ մարմնամարզանքի հետեւիր: Բախտաւոր թիւերդ են: 8,17,20,29,33

ԱՅԾԵՂՋԻԻՐ **Դեկտեմբեր 22-Յունուար 19**
 Ապրած կեանքովդ օրինակելի պետք է ըլլաս զաւակներուդ, որպէսզի անոնք յարգեն քեզ: Խոստումներդ շատ կը խախտես, անվստահութիւն թափանցելով գործընկերներուդ: Գիշերները անքուն մնալը առողջութեանդ կը վնասէ: Բախտաւոր թիւերդ են: 5,18,22,31,34

ԾՈՎԱՆՈՅՇ **Յունուար 20-Փետրուար 18**
 Քաջաբար արտայայտ գաղափարներդ եթէ նոյնիսկ կը խորհիս թէ կրնաս մերժուիլ: Համակարգիչի չափազանց գործածութիւնը պատճառ պիտի դառնայ առողջութեանդ վատթարացման: Եշմարիտ եղիր գործիդ մէջ եւ մի խաբուիր փորձութիւններէ: Բախտաւոր թիւերդ են: 2,5,8,22,34

ՉՈՒԿ **Փետրուար 19-Մարտ 20**
 Մանկութեան յիշատակներդ յաճախ վերյիշելով՝ անցեալիդ մէջ կ'ապրիս: Պետք է ձերբազատուիս այդ մտածումներդ եւ վայելես ներկան որ շատ աւելի կարելոր է: Պարտաւորութիւններդ մի մոռնար բարեկամներուդ նկատմամբ: Բախտաւոր թիւերդ են: 9,11,25,31,34

ՈՒՄԱՅՈՒԲԻԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Շարունակուած էջ 6-էն

«...այս յեղափոխութեան գաղափարաբանութիւն»-ը, դարձան ուսաստանների գլխաւոր քարոզչական գէնքերը: Ինչպէս, օրինակ, epress.am-ն է օգտագործում « 1915-ին Ռուսաստանը ծախեց հայերին. Յեղապանութիւնը՝ ականաւոր պատմաբանի աչքերով »:

Ռուսաֆոք մտաւորականների մէջ նոյնիսկ մի կասկած կայ, թէ Ռուսաստանը գործարքի մէջ է եղել թուրքիայի հետ եւ յատուկ առաջ չի գնացել, որպէսզի թուրքերը հեշտութեամբ հայերին կոտորեն, հետեւաբար ցեղասպանութեան մեղքի բաժինն ընկնում է նաեւ Ռուսաստանի վրայ, աւելի մոլեռանդ ուսաստանները միայն Ռուսաստանին են մեղադրում: Մէջբերում են Ռուսաստանի արտգործնախարար Ալեքսանդր Լոբանով Ռոստովսկուն (1824-1896) վերագրուող խօսքը՝ Հայաստանը մեզ պէտք է առանց հայերի:

(Օրինակ՝ <http://civilngo.com> կայքում ասում է. «Յեղասպանութիւնների ժամանակ ուսական կողմը «Հայաստանն առանց հայերի» ծրագրի իրականացման շրջանակներում հայերին կոտորելու հարցում ուղղակիօրէն աջակցել է բուրբակաւ կողմին»):

Բայց մի ուսու դիւանագէտին վերագրուող խօսքը շրջանառութեան մէջ դնելով՝ չի հիմնաւորում, թէ ինչո՞ւ Ռուսաստանը թուրքիայի ձեռքով պիտի հայերին կոտորելու պլաններ մշակեր: Ռուսաֆոքները որեւէ ռացիոնալ բացատրութիւն չեն տալիս, թէ որն էր մի երկրի ներսում հայերին կոտորել տալու մէկ ուրիշ երկրի շահը:

Իրականում Ռուսաստանի կայսերական շահերի մէջ հայերի լինել կամ չլինելու հարցը ընդհանրապէս գոյութիւն չունէր: Ոչ մի կայսրութեան էլ բացարձակապէս չէր յուզում փոքր ազգերի ճակատագիրը, կ'ունենա՞ն երկիր, թէ՞ ոչ, դուրս կը գա՞ն լծի տակից, թէ՞ ոչ, կը կոտորուե՞ն արդեօք, թէ՞ ոչ: Այդպէս էր նաեւ առաջին աշխարհամարտի ժամանակ. թէեւ կայսրութիւնները իրենց աշխարհակալ, երկրագունդը բաժանելու ծրագրերը թաքցնում էին փոքր ժողովուրդների փրկութեան անուան տակ, բայց ինչպէս Ֆրանսային ու Մեծ Բրիտանիային, այնպէս էլ Ռուսաստանին բացարձակապէս չէր հետաքրքրում փոքր ժողովուրդների ճակատագիրը: (Ինչպէս այժմ՝ Արեւմտեան տէրութիւններն իրենց ենթակայութեան տակ չգտնուող երկրների ռեսուրսներին տիրանալու համար մարդու իրաւունքներն են մէջտեղ հանում):

Բայց փոքր ժողովուրդների


մէջ միշտ էլ լինում են մտաւորականներ, որոնք հաւատում են կայսրութիւնների խոստումներին ու իրենց ժողովուրդներին ակամայ դարձնում նրանց ձեռքին գործիք, իսկ երբ պարզում են, որ իրենց ոչ միայն չեն փրկել, այլեւ օգտագործել ու թողել են անպաշտպան, ասում են՝ նրանք դաւաճանեցին (երկու տարի առաջ մի ուկրաինացի գալթացած ինձ ասում էր՝ Եւրոպան մեզ դաւաճանեց, յետոյ պարզեցի, որ այդ համոզմունքը շատ տարածուած է Ուկրաինայում, օրինակ՝ Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Եուշչենկոն էլ յայտարարում է՝ Եւրոպան դաւաճանեց Ուկրաինային):

1915-ի Յունուարին Սարիղամիշի ճակատամարտից յետոյ, երբ թուրքական բանակը ջախջախուել էր, ռուսների առաջ չհարժուելը բացատրուում է նաեւ նրանով, որ ահաւոր ցուրտ ձմեռ էր, (թուրքերի պարտութեան համար ցուրտն էլ դեր խաղաց, բազմաթիւ թուրք զինուորներ ցրտահարուելուց կոտորուեցին), եւ ռուսները սպասում էին, որ եղանակը տաքանար:

Իսկ միւս հարցը առկախ է մնում՝ յետագայում, երբ առաջացան ու մտան Վան, ուր հայկական ինքնապաշտպանական ուժերը յաղթել էին թուրքական բանակին, ինչո՞ւ մէկ ամիս անց՝ Յուլիսին, երբ գոյութիւն չունէր թուրքական առաջխաղացման վտանգ, նահանջեցին, որի հետեւանքով Վանը դատարկուեց: Ու այդպիսի «կեղծ նահանջ» մի անգամ էլ արեցին մէկ ամիս անց:

Մեկնաբանում է պատմագիտութեան դոկտոր Աշոտ Ներսիսեանը. «Ռուսական կայսրութեան երազանքն էր Բոսֆորի ու Դարդանէլի նեղուցներին տիրանալը: Թէեւ Անտանտի դաշնակիցների միջեւ պայմանաւորուածութիւն եղել է, որ պատերազմի արդիւնքում նեղուցներն անցնելու են Ռուսաստանին, բայց կողմերը իրար չէին վստահում ու դրա հիմքերն ունէին: Արեւմուտքից թուրքիայի հետ պատերազմում էին Անգլիան եւ Ֆրանսան (Դարդանէլի օպերացիան), եւ եթէ հարաւից Ռուսաստանը առաջ գնալով վերջնական ջախջախէր թուրքական բանակը, թուրքերը չէին կարողանայ դիմադրել Անգլիային ու Ֆրանսային եւ նեղուցները կ'անցնէին դաշնակիցներին, իսկ յետոյ դրանք յետ բերելը Ռուսաստանի համար անհար կը լինէր: Ռուսաստանը, առաջ չգնալով ու կեղծ նահանջներով, հնարաւորութիւն էր տալիս թուրքական բանակին վերակազմաւորուել ու դիմադրել Ֆրանսային ու Անգլիային, որ նեղուցները նրանց ձեռքը չանցնէին:

(Շարունակելի)



MEHER BABIAN, D.D.S.
 General Dentistry

1111 S. Glendale Avenue
 Suite 206
 Glendale, CA 91205
 Tel: (818) 547-0884
 Tel: (818) 547-1476

ՅՈՅՆ ՄԵԾ ՓԻԼԻՍՈՓԱՅ, ՈՒՍՈՒՑԻՉ, ԱՐԵՄՏԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՊԴԱՏՈՆ -PLATO (428 Ք.Ա.- 348 Ք.Ա.)

Պղատոնին վրայ մեծ ազդեցություն ունեցած է իր ուսուցիչը՝ Սոկրատը: Ան գրի առած է Սոկրատի դատավարութեան ընթացքին անոր պաշտպանութիւնը - apology of socrates: Այս երկը կը համարուի յունական հին փիլիսոփայութեան գլուխ գործոցներէն մէկը: Անոր մէջ Սոկրատ ինքզինք կը պաշտպանէ սոփիսթներու արձակած ամբաստանութիւններուն դէմ: Սոփիսթ դպրոցը երիտասարդ տղաք կը պատրաստէր գործնականութեան հիման վրայ, այսինքն հեռու բարոյականութենէ: Մինչ Սոկրատի հիմնած դպրոցը կը հաւատար բարոյական արժէքներու վրայ հիմնուած ուսուցումին: Այդ շրջանին Աթէնք կ'անցնէր դժուար հանգրուանէ մը Սփարթակի դէմ կրած պարտութենէն ետք մարդիկ սկսած էին չհաւատալ ուսման վարութեան - democracy եւ անոր հիմը կազմող բարոյական արժէքներուն: Այս է պատճառը, որ Սոկրատ կորսնցուց իր դատը: Նոյնիսկ իր «Երկխօսութիւն» երկին մէջ Պղատոն իր բերանին մէջ կը դնէ Սոկրատի խօսքերը:



մարդիկ լուսաւորուին եւ տգիտութենէն դուրս ելլեն: ան տգէտ մարդը նմանցուց մութ քարայրի մը մէջ շղթայուած անհատի մը, որ չի գիտեր լոյսի գոյութեան մասին: Այսպիսի մարդիկ կամաց կամաց պէտք է դուրս հանել քարայրէն որ չկուրնան ուղղիլ լոյսին ազդեցութենէն: Ան հիմնեց առաջին դպրոցներէն մէկը, որպէսզի մարդիկ մղէ ուսման եւ տգիտութենէ ձերբազատուին: Իր աշակերտներէն մէկն էր նշանաւոր Արիստոտէլը:

Անոր հիմնած դպրոցը կոչուեցաւ «Պղատոնականութիւն» - platonism եւ ան մեծ ազդեցութիւն ունեցաւ առաջին քրիստոնեայ փիլիսոփաներուն վրայ, ինչպէս Ս. Օգոստինոս եւ Միջնադարու փիլիսոփաներու վրայ:

Իր վերջին տարիներուն ան այցելեց Սիկիլիա, Եգիպտոս եւ Միրենի երկիրը՝ ներկայի Լիպիա:

Պղատոնի աւանդը շատ մեծ է արեւմտեան փիլիսոփայութեան վրայ: Անոր գաղափարները մինչեւ հիմա որպէս հիմք կը ծառայեն համալսարաններու ուսման ծրագիրներուն մէջ: Ան առաջին փիլիսոփաներէն էր, որոնք աւետեցին մարդուն բարօր կեանք մը ունենալու իրաւունքը: Ասոր հասնելու համար անոնք ստեղծեցին այն համակարգը, որ պիտի օգնէր այդ նպատակին:

Պղատոնի գլուխ գործոցն է իր «Հանրապետութիւնը» - the republic երկը: Այս երկին մէջ փիլիսոփան կը հաստատէ, թէ լաւագոյն պետութիւնը այն պետութիւնն է ուր փիլիսոփաները իշխողներն են: Որպէսզի իշխողը հեռու ըլլայ ամէն ընչաքաղցութենէ, ուրեմն ան պէտք է ըլլայ փիլիսոփայ մը, որուն չի հետաքրքրեր նիւթը: Ընկերութիւնը կը բաժնուի գինուորներու, իշխողներու եւ վաճառականներու խաւերուն, ուր ամէն մարդ գործունի կատարելիք: Ներդաշնակութիւնը պահելու համար այս խաւերը պէտք է գործեն որոշ մեթոտով մը: Ուսուցումը կը սկսի կանուխէն եւ կանուխէն կը ճշդուի թր տղան որ խաւին մէջ կրնայ արդիւնք տալ: Պղատոն նաեւ ճիգ թափեց որ

ԱՅՍ ԱՆԳԱՄ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԼՈՒՐԶ

Շարունակուած էջ 14-էն

ազգային օրհներգի հեղինակը իրենց Գլխաւորնովն է: Դու պատկերացնո՞ւմ ես, թէ ինչ անհաճոյ իրավիճակ կը ստեղծուի հայ ժողովրդի համար, երբ մարդիկ բաւերի երաժշտութեան մէջ «յայտնաբերեն» մեր հիմնի երաժշտութիւնը: Աւելի լաւ է մանրամասնութիւնների մէջ չմտնենք, թէ չէ շատ հեռուն կը գնանք: Ապագային, երբեւէ սպասուելիք նման «փորձանքից» գերծ մնալու միակ ուղին ձերբազատուելն է մեր երաժշտութեան հետ բնաւ առնչութիւն չունեցող «թշուառ, անտէր» հիմնից:

- Բա՛ցց, բայց մանաորօ, այսքան տարիներ յետոյ հնարաւոր է նման քայլի դիմել:

- Իսկ ինչո՞ւ ոչ: Ինչո՞ւ հնարաւոր չէ: Իսկապէս վտանգաւոր է այժմիկ մեր այսօրուայ հիմնի հետ «խաղալը», մանաւանդ, երբ ի լուր աշխարհի էլ յայտարարուած է թէ Հայաստանի հիմնի հեղինակը Բար-

սեղ Կանաչեանն է: Մենք գրեթէ յիսուն տարի երգեցինք աղօթք դարձած խաչատուրեանի հիմնը եւ մէկ օրուայ մէջ մի կողմ նետեցինք անհեռատեսօրէն, ինչպէս մի շարք այլ արժէքներ...: Եւ դրանք վերականգնելու համար անհրաժեշտ է լրջագոյն աշխատանք ծաւալել: Խաչատուրեանի հիմնի վերականգնման գործը իրենց ձեռքը պիտի վերցնեն նրանք, ովքեր փորձեցին թաղել, ժողովրդի յիշողութիւնից ջնջել մեր ժողովրդի փառքը գովերգող երաժշտութիւնը:

- Խօսքը ձերն է Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան վարչութիւն եւ անդամներ: Ինչպէս դուք ժամանակին, քսանհինգ տարի առաջ լռեցրիք խաչատուրեանի ձայնը, այնպէս էլ բաց արէք փականը եւ թող նորից հնչի մեր իսկական հիմնը՝ այս անգամ արդէն «Ազատ, անկախ, նախնեաց երկիր Հայաստան» բառերով:

Եկէք վերականգնեք մեր ազգային հպարտութիւնը:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.առձայնել՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

ՌԱՖՅԻ ՔԷՕՐՈՂԱԵԱՆ ԸՆԴ ԹԻՆԱ ՌԱԺԷԱ
Ամուսնացեալք 21 Մայիս, 2016 Փաստինա

Մեր ջերմ շնորհակարարութիւնները ամուսնացեալ գոյզին եւ անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրողեաններուն:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel : ----- Email: -----

Ն.Ս.Մ.Մ ԱՐՈՒԵՍԻ

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Կը Կազմակերպէ

ԱՍՄՈՒՆԹԻ ԴԱՍԸՆԹԱՅԵՆԵՐ

Տարիքային Բոլոր Խումբերու Դամար
Դեկավարութեամբ՝

Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող
Եւ Ընդունակալրագրող

ՆՈՒՆԷ ԱԻԵՏԻՍԵԱՆԻ

Փորձերը տեղի կ'ունենան ԸԿԲՄ-ի «Կարօ
Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave.
Pasadena .ca 91104

Արձանագրութեան Դամար Դիմել՝

Տիկ. Արմինէ Լաչինեանին Ըեռ. 626-372-4662
Պր. Յարութ Տերվիչօղլեանին Ըեռ. 323-351-8001

